E.91.90
4-68

1150-Uz.

58

Въ Лазаревскій Институтъ
восточныхъ языковъ отъ
Его Превосходительства
Христофора Екимовича
Лазарева приношеніе
1854 года
изъ Парижа.

36

# ՈՂԲ

# ԵՐԵՄԵԱՅ.

12004

891.99

# ÉLÉGIE

SUR

# LA PRISE D'ÉDESSE

PAR LES MUSULMANS,

**PAR NERSÈS KLAIETSI,**

Patriarche d'Arménie ;

PUBLIÉE POUR LA PREMIÈRE FOIS, EN ARMÉNIEN,

PAR LE Dr J. ZOHRAB,

De Constantinople.

Ouvrage publié par la Société Asiatique.

**PARIS,**

LIBRAIRIE ORIENTALE DE DONDEY-DUPRÉ PÈRE ET FILS

Imp.-Lib. et Memb. de la Société Asiatique de Paris,

Et Lib. de la Soc. Royale Asiat. de la Grande-Bretagne et d'Irlande, sur le Continent,

RUE RICHELIEU, N° 47 *bis*, ET RUE SAINT-LOUIS, N° 46, AU MARAIS.

M DCCC XXVIII.

891.99-1

891.99
3

4862
38

PARIS. — IMPRIMERIE DE DONDEY-DUPRÉ,
Rue Saint-Louis, N° 46.

# ՈՂԲ

# ԵՐԵՄԵԱՅ.

# ՈՂԲ ԵԴԵՍԵԱՅ

## ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՅ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ։

*Զառաջինն 'ի լոյս ընծայեալ գործադրութեամբ Տ̃ն Յովհաննու Վրդպտի Զօհրապեան՝ կոստանդնուպօլսեցւոյ:*

*Յասիական ընկերութենէն փարիզու :*

№ 36.

1827 — ՌՄՀԷ ·

'Ի ՓԱՐԻԶ.

'Ի Գործարանի Տօնակէի Տիւբրէ :

# ՆԱԽԱԲԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ։

Ողբերգական քերդողութիւնս առմանն Եդեսեայ քաղաքի՝ յոտանաւոր գրուածս մէջ հայրապետին մերոյ Ներսէսի շնորհալւոյ՝ քա՛ջ ծանուցեալ կատարելագործն, (ուր և այսմ նոյնահանգ արուեստի հեղինակ 'ի հայկականս դպրութեան՝ զնա ինքն ունիմք ճանաչել անշուշտ.*) չէ ինչ երկբայելի՝ եթէ 'ի սակս կասկածանաց վտանգի ըստ դէպս բընակութեան մերազնեայց, մինչև ցարդ՝ տարաբախտութեամբ ինձ ասեմ անհամարձակելի եղև՝ ընդ այլ և այլ քերդողական գրութիւնս նորին և զսա 'ի տպագրութիւն արձանացուցանել. խնամով ինձ 'ի ձեռագիր օրինակաց յօրինակս և եթ յածեալ առ ուսում-

* Լամբր· 'ի նեբր· Շնորհ ։

Հոմերական տաղից չափով,
ոտանաւոր տառից գրով ։ . . .
Կանոն ուռ-հայոյ՝ ողբս հաստատէր,
զաղէտն 'ի մի՝ գործ աւարտէր ։

նաւէրս ։ Օ՜ր ապաքէն տեսանեմք մերումս ժամանակի և տեղւոյ պահեալ՝ ՚ի դէպ այնմ համարձակագոյնս ձեռնամուխ լինելոյ ՚ի բարեհամբոյր կենցաղօգուտ վարչութիւն բանասիրաց ․ յաջողելով զառաջինն որդեամբք Ասիական ընկերութեան քաղաքիս փարիզու ՚ի լոյս ելանել ։ Ուր և բազմարդիւն յօրինիչ գործոյս առ նոյն նպատակ ասէ բերեալ ՚ի սոյն՝ ՚ի ժտելոյ ուրեմն իշխանազուն եղբօրորդւոյ իւրոյ Ազիրատի՝ անդստին ՚ի մանկական տիոցն ՚ի զինուորական մարզս հրահանգելոյ․ այն՝ որոյ ՚ի խնդրոյ իմանամք արարեալ և զերկրորդ մասն Յորդի գրոցն ։

Արդ ՚ի սմին յայսմ՝ բանաստեղծօրէն ՚ի ձև բարառնութեան յինքն յեղանակեալ ըղղեմս վշտակիր քաղաքին եղեռեայ՝ ՚ի նախերգանսն անդ յիւրն ողբակցութիւն հրաւիրէ զչորրեքծագեան տիեզերս, և յանուանէ առ հընդեսին բազմահռչակ ՚ի նախնումն մայրաքաղաքսն ուղղէ զբանս, անդ՝ ուր ըստ եկեղեցականին հաստատեալ եղեն աթոռք քահանայապետութեանց ։ Նա անտի առ հայաստանեայս շրջեալ զոձ բանիցն ՚ի Վաղարշապատն և յԱնի մայրաքաղաքս՝ ընդ մերս որ-

շակունեաց և բագրատունեաց թագաւորութեամբք . յանդիման առնէ զնոցուն նախկի ծաղկաւէտ բարգաւաճութեանն բաստս, և զվերջինն խորանման բաժակ դառնահամ ՚ի նմին ձեռանէ արբեալ : Եւ այնուհետև ընկլիզըն առնէ ՚ի համար ածել ցայն վայր զեւըն բարերջանիկ վիճակ յոր վայելեալն յօրանայր . ըստ արտաքին դրից կայանաց՝ բազմեալ ասէ ՚ի մէջ երկուց մեծամեծ գետոցն տիգրիսի և եփրատայ, արքայարան հաստատեալ երբեմն՝ հայոց և ասորւոց թագաւորին Աբգարոսի . և յեւթանասուն աւանից շուրջ պարառեալ զօրէն թիկնապահաց թագաւորութեան . ՚ի պարարտութեան երկրի յագդի ագդի արդիւնս բերմանց բուսոց զուարճացեալ : Ուր և յիշէ զանուանին զայն զակնն ինքնաբուղխ կենդանի ջրոց ծովածաւալ՝ զուարճալի աւազան ձեւացեալ ՚ի քաղաքամիջի անդ . և պատրաստեալ ՚ի մաքրութիւն հրապարակաց, և յանսպառ ոռոգումն բուրաստանաց . հանդերձայլ ևս բարեշուք հանգամանօք վայելչութեանցն ըստ կարգի :

Այլ ընդ այսանակ շքեղագարդ յօրինուածս նորուն ասէ՝ ընդաբոյս մախանօքն բե-

րեալ անպականարար ոսոխին, և սպասեալ ժամուն թերութեան յիւրական ուժոյն կարողութենէ՝ յեղակարծումն պահու յարձակել 'ի վերայ նորա. և պատնէշ պաշարմամբ իբր ամսօրեայ ժամանակ 'ի նեղ արկանէ զքաջամարտիկ ընդդիմակալն 'ի ներքուստ՝ անօգնականս յարտաքուստ ձեռն տալոյ. մինչև ուրուրեմն մուտ գործեալ 'ի միոյ կուսէ պարսպին յախուռն զօրօք 'ի ներքս յարձակի: Որ 'ի նկարագրել զաղէտ անհնարին կոտորածի երկոցունց կողմանց՝ 'ի մէջ բերէ և զառաքինութիւն չորից քրիստոնէական դաւանութեանցն հօտապետից՝ հռոմայեցւոց և հայոց, յունաց և ասորւոց, որ և նոքին 'ի գլուխ իւրաքանչիւր հօտիցն ոչ զանգիտեցին ոխերիմ թշնամւոյն հաւատոյ ախոյեան ելանել: Այլ 'ի խուռն բազմութենէ բարբարոսին 'ի պարտութիւն մատնեալ քնադաւան ազանցն, պատմէ այնուհետև մի ըստ միոջէ զգազանուտ եղեռնագործութիւնս վայրենագունիցն այնոցիկ՝ զոր ըստ իւրեանց սովորականին 'ի վերայ ածէին, և մնապարծութեամբ զայն յաղթանակ՝ բուռն ուժոյ բազկի իւրեանց գրէին՝ 'ի ներգործութենէ չարագլուխ աղանդապետին

զօրացեալ ։ Զորս հեգնելով բանաստեղծն՝ ՚ի նմանութիւն նկուն և զազիր կենդանեաց, խորհրդածէ սովորութիւն գոլ նախախնամողին ամենայնի զիւրն ընտիր արարածս այսպիսեաւքս փորձ կացուցանել․ և հուսկ ուրեմն զանօթ պատուհասին չարաչար կատարածիւ ՚ի կորուստ մատնել ։ Ուր և զվարկ աղէտիցն՝ նոցին ՚ի վերայ հասանելոց՝ պէսպէս եղանակաւ այլաբանեալ, զելսն այնր արժանահաս դատաստանի՝ պուետական իմն առասութեամբ կանխաձայնէ հատուցանել ՚ի ձեռն նորին իսկ փռանկ ազգի, այն որ այժմ անուանին փռանցուզք․ որ յառաջադէմն էին ՚ի խաչակիր շահատակութեան անդ եւրոպեանցն միաբանելոց՝ ՚ի վանումն չարաղանդ բարբարոսական արշաւանաց բռնացելոց ՚ի տնօրինական կողմանսն ։ Յորոց և ՚ի թագաւորեալ մայրաքաղաքին՝ որպէս ասացաք, պատեհաբար իմն սկիզբն առնու հրատարակումն գուշակաւոր բանիցս ։ Նախաշաւիղ արդեւք յապագայն ամբոխ գործոյն վճարման ։ Եւ այնու օրինակաւ շըրջեալ զողբերգականսն ՚ի յուրախութեանցն նուագս, աւետիս մատուցանէ զանդրէն կրկնապատիկ բարօրութեանցն լիա֊

պատար վրիճակ՝ զհետ եկեալ որդւոց մշտացե-
լոցն տեսանել:

Օգաղափար այսր ողբոց եղեսեայ՝ անդրստին ՚ի համբակութեան տիոցս ընդօրինակեալ իմ ՚ի գրչագրէ եղելոյ ՚ի կիլիկիայ, և յետոյ ուրեմն յայլոց օրինակաց, և յընտրելագունէն գրելոյ յեգնկայ՝ զտարբերութիւնսն աւնմին նշանակեալ. ՚ի հասանելս ՚ի փարիզ՝ դէպ եղև ինձ յարքունի մատենարանին գտանել և զերրորդ օրինակ գործոյս. որ և նոյն այս թէպէտ և բազմօք վրիպակէր՝ յանհմուտ գրչէ գծագրեալ ՚ի վերջին ժամանակս, սակայն և այնպէս ոչ սակաւ նպաստ եղև յառաւել ուղղաբանութիւն առաջիկայ տպագրելոյս: Իսկ զայլևս մնացեալ թերութիւնսն՝ թողումք յաջորդ տպագրողաց, սատարութեամբ և ևս հարազատագունից անկեղծ օրինակաց՝ վերածել ՚ի կատարելագոյնս:

Յ. Վ. .Օ.

# NOTICE

SUR

# NERSÈS-KLAÏETSI,

AUTEUR DU POÈME ÉLÉGIAQUE

## SUR LA PRISE D'ÉDESSE.

NERSÈS KLAÏETSI, auteur de l'Élégie sur la prise d'Édesse, par les Musulmans, est le plus estimé des poètes arméniens. Il vivait au 12ᵉ siècle de notre ère, et il fut patriarche universel ou *catholicos* de l'église d'Arménie, le quatrième du nom de Nersès. Il descendait de la race royale des Arsacides par sa mère, fille du célèbre Grégoire Magistros. Son père Abirad, seigneur de la forteresse des lacs, habitait auprès de Kharpert dans la Mésopotamie septentrionale. Nersès fut envoyé dès sa tendre enfance auprès de son grand oncle le patriarche Grégoire Vgaïaser, qui mourut en 1105. C'est en 1166 que Nersès, déjà fort avancé en âge, devint le chef de l'église d'Arménie en succédant à son frère Grégoire III.

Ils habitèrent l'un et l'autre le fort châ-

teau de *Hrhomkla,* situé dans la Syrie septentrionale, sur la rive droite de l'Euphrate. Grégoire III l'avait acheté de la veuve de Joscelin de Courtenay, dernier seigneur français d'Édesse. Il fut, jusqu'en l'an 1292, la résidence des patriarches d'Arménie. Il fut alors conquis par le sulthan des mamelouks d'Égypte. Nersès doit son surnom de *Klaïetsi* au séjour qu'il fit dans cette ville, qu'on appelle ordinairement *Hrhomkla*, c'est-à-dire *la forteresse romaine*. *Kla* ou *Gla,* կլայ, altération en arménien vulgaire du mot arabe قلعة *Kalaah* (forteresse), est un abrégé usuel de ce nom. Il signifie *la forteresse* par excellence. Cette place était effectivement à cette époque, par sa situation et par ses remparts, le lieu le plus fort de cette contrée. Nersès mourut le 13 août de l'an 1173. On peut, pour de plus amples détails sur sa vie, consulter l'article que je lui ai consacré dans la *Biographie universelle*, tom. XXXI.

Les Arméniens donnent encore à Nersès le surnom de *Schnorhali* շնորհալի, c'est-à-dire *le Gracieux*. Il le doit autant à la bonté de son caractère qu'à la douceur et à la grâce toute particulière de ses vers. Il est réputé être l'inventeur de la poésie rimée parmi les Arméniens (1). Ses premières compositions

(1) Nersès Lampronatsi son contemporain dit positivement qu'il en fut l'*inventeur* գտող.

sont écrites selon l'ancien style poétique de la nation, style dont les principes sont totalement inconnus des Arméniens modernes; mais la plus grande et la meilleure partie de ses ouvrages sont rimés. On ignore les causes et les circonstances de cette révolution; pour moi, je suis porté à croire que ce fut une conséquence de l'influence que les Francs et les Français en particulier exercèrent à cette époque sur les Arméniens, avec lesquels ils eurent de très-fréquens rapports. Nombre de seigneurs français s'établirent dans la Cilicie, la petite Arménie et la Syrie arménienne; ils y contractèrent des mariages avec les plus illustres familles du pays, introduisirent dans l'idiome vulgaire beaucoup d'expressions françaises, et enfin ils donnèrent à tout le pays des souverains issus de la race française des Lusignans. Ce qui donne encore lieu de penser que c'est à cette cause qu'il faut rapporter l'introduction de la rime chez les Arméniens, c'est que chez eux ces rimes ne se disposent pas en se variant deux à deux comme à présent parmi nous; elles s'arrêtent long-tems sur une même consonnance, jusqu'à ce qu'elle soit épuisée; enfin, beaucoup de pièces de vers arméniennes sont tout entières composées sur une seule rime, comme on le pratiquait ordinairement parmi nous à cette époque, c'est-à-dire aux 12e et 13e siècles.

Les ouvrages de Nersès Klaïetsi ont conservé jusqu'à nos jours une très-haute célébrité chez les Arméniens, qui en ont donné un grand nombre d'éditions. Le poème élégiaque sur la prise d'Édesse est le seul qui soit resté inédit. Ce n'est pas qu'il soit moins digne d'estime que les autres compositions de Nersès, il est peut-être au contraire plus estimé, plus recherché ; il se distingue, sans aucun doute, par plus de verve et d'énergie. Il était bien difficile qu'un chrétien, chef spirituel d'une des nations de l'Orient le plus attachées à la religion chrétienne, déplorant les infortunes et les catastrophes d'une des plus puissantes villes chrétiennes de l'Asie, conquise de vive force par les infidèles, ne joignît pas à ses lamentations quelques invectives contre les Musulmans. On trouve dans ce poème plusieurs morceaux de ce genre. Les imprécations de Nersès contre Mahomet, contre sa loi et ses sectateurs, sont si véhémentes, si énergiques, que les Arméniens ont craint de s'exposer aux persécutions des Turks, en reproduisant ce poème par la voie de l'impression. Ce motif le fait d'autant plus rechercher ; les copies en sont très-nombreuses, très-répandues, mais aussi très-fautives. M. le docteur Zohrab, premier éditeur de cet ouvrage, a conféré le texte qu'il livre aujourd'hui à l'impression sous les auspices de la Société Asia-

tique, sur les meilleures copies qui existent à Venise et à Constantinople. Il l'a en dernier lieu comparé avec une autre copie assez moderne et d'ailleurs fort défectueuse, qui se trouve à la Bibliothèque royale de Paris sous le n° 130 A. Il y a cependant trouvé quelques bonnes leçons.

Le mérite réel de ce poème, l'une des productions les plus remarquables de la littérature arménienne, n'est pas le seul motif qui doive le rendre digne de l'attention de la Société Asiatique de Paris. Ce poème se rattache à l'histoire des guerres et des conquêtes que les Français firent dans l'Orient pour la délivrance de la Terre-Sainte. Lorsque Édesse tomba sans retour sous le joug des Musulmans, elle était française, elle était l'héritage des seigneurs de la première maison de Courtenay, célèbres par leur valeur entre les héros des premières croisades. Le comté d'Édesse, formé de l'ancien royaume d'Abgare et d'une partie de l'antique Commagène, était, par sa position avancée au-delà de l'Euphrate, le boulevard des possessions chrétiennes en Orient. Édesse fut conquise un samedi, le 23 décembre de l'an 593 de l'ère arménienne, l'an 1144 de J. C., ou le 3 janvier 1145, selon les historiens syriens, par le sulthan Emad-eddin Zenghi, père du fameux Nour-eddin, prince des Atabeks de

Syrie, de la race des Turcomans. La chute d'Édesse remplit de douleur tous les peuples de l'Europe. Les exhortations des souverains pontifes, les prédications de saint Bernard, amenèrent une seconde croisade. Notre roi Louis-le-Jeune et l'empereur d'Allemagne Conrad passèrent en Asie pour reconquérir Édesse. Le zèle qui faisait courir aux armes les guerriers de l'Occident, inspirait aussi les poètes de l'Orient. Il a produit le poème élégiaque de Nersès Klaïetsi. On voit par la chronique syriaque de Grégoire Bar Hebræus, ou Abou'lfaradj, que les poètes syriens s'étaient exercés sur le même sujet. Cet historien, qui raconte en termes fort lamentables la catastrophe d'Édesse, nous apprend sous l'année 1456 de l'ère des Seleucides, 1145 de J. C., que l'évêque Denys bar-tsaliba était l'auteur de deux poèmes sur la prise d'Édesse, et que l'évêque syrien de cette ville, Mar-Basile, en avait composé trois autres, tous élégiaques. Ces ouvrages ne nous sont pas parvenus.

J. S. M.

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,

ԲԱ՛Ն ասացեալ՝ բարբառնական ,
տաղիւ չափեալ՝ հոմերական .
Խաւսեալ ձայնիւ՝ ողբերգական ,
վասն եղեսեայ՝ մեծի առման :
՚Ի Թուականիս՝ հինգ հարիւրի ,
և ինընսուն՝ ութերեկի ·
Քսան ևերեք՝ դեկտեմբերի ,
յերրորդ ժամու՝ յաւր շաբաթի :

ԱՐԴ ողբացէք՝ եկեղեցիք , Ա
հարսունք վերինն՝ առագաստի .
Քորք և եղբարք՝ իմ սիրելիք ,
որք յընդհանուր՝ կողմ աշխարհի :
Քաղաք և գեւղ՝ առ հասարակ ,
ազգք և ազինք՝ որ էք յերկրի ,
Հաւատացեալ՝ք քրիստոսի ,
երկրպագուք՝ նորին խաչի:

Նա՛խ առաջին՝ ձեզ բարբառիմ ,
արփիափայլ՝ և հրաշալի ·
Չորեքկերպից՝ ըն նըմանեալ ,
յերկրի աթո՛ռք՝ երկնաւորի :
Որ էք բղխումն՝ ա̄ծային ,
՚ի յաղբերէն՝ ադենային ·
Յորս առ ՚ի ձէնջ՝ քառավտակ ,
յորդահոսան՝ գե՛տ հոլովին ·
Արբուցանե՛լ՝ ըզտիեզերս ,
աւետաբեր՝ բղխմա՛մբ բանին ·
Առ որս խաւսիմ՝ աղերսալի ,
դուք լուեցէք՝ լալոյս ձայնի :

---

Երուսաղէ՛մ՝ քաղաք մեծի ,
թագաւորին՝ երկնաւորի ·
Ուստի աւրէնք՝ և մարգարէք ,
աղբերաբար՝ բղխեալ յերկրի :
Յորմէ որդին՝ հա՛ւր միածին ,
լո՛յս ծագեցաւ՝ անճառելի ·
Եւ ի՛նձ գըրեաց՝ երնութիւն ,
յառաջագոյն՝ քան զամենի ;
Քանզի նախկի՝ հաւատացի ,
զորդի ընդ հաւր՝ դաւանեցի ·

Որով թէ ոչ՝ յանդըգնէի,
գլխս վեհագոյն՝ քեզ տայի :
'Ի քեզ սպանին՝ զո՛րն 'ի փայտի,
ես 'ի հեռուստ՝ երկիրպագի ·
Թէպէտ և այժմ՝ 'ի մի հոգի,
երկրպագեմք՝ նորին խաչի :
Բայց լո՛ւր և դու՝ ո՛վ սիրելի,
տարագրելոյս՝ աղաղակի ·
Լե՛ր մխիթար՝ ցաւակցելի,
և ցո՛յց ինձ դեղ՝ բեկեալ սրտի :
Եւ դու Հռոմ՝ մա՛յր քաղաքաց,
գերապայծառ՝ և պատուելի ·
Մեծին աթոռ՝ ըդ պետրոսի,
առաքելոց՝ գըլխաւորի :
Եկեղեցիդ՝ անշարժելի,
'ի կեփայեան՝ շինեալ վիմի ·
Դրանց դըժոխոց՝ անյաղթելի,
և կնիք երկնի՝ցըն բացողի :
Ո՛րթ վայելուչ՝ բազմաստեղի,
և հաստարմատ՝ տունկ պաւղոսի ·
Առոգելով՝ արեամբ նորին,
որպէս ըզդրախտն՝ որ յադենի :
Մասին հասեալ՝ ըդ ղուկայի,
աստուածային՝ մատենագրի ·

Ահա՛ առ քեզ՝ բանըս խաւսիմ,
վիճակ ւաթոռ՝ըս թաղէի :
Լո՛ւր ՚ի հեռուստ՝ իմոյս ձայնի ,
լե՛ր ողբակից՝ ինձ յայս վայրի ·
Լա՛ց ընդ լացողս՝ որպէս ասի ,
ըստ գրեցելումն՝ առ քեզ բանի :
Ձեռըն մատո՝ վաղվաղակի ,
ինձ կապելոյս՝ ՚ի տան բանտի ·
Ա՛ռ ըզվըրէժս՝ աններելը ,
՚ի թըշնամւոյն՝ գիս գերողը :
Առ քե՛զ են բանք՝ իմ փարելը ,
ո՛վ դու քաղաք՝ յոյժ պանծալը ·
Որ Կոստանդեայ՝ թագաւորի ,
շինեալ իսկիզըն՝ ասխայի :
Երկրորդ եղեալ՝ երուսաղէմ ,
և Նոր Հըռոմ՝ զարմանալը · ·
Սիրեցելոյն՝ աշակերտի ,
աթոռ գոլով՝ փոխադրելը:
Ճողովարան՝ սուրբ վըկայից ,
տուն և տեղի՝ մաքրագունից .
Գահոյք հըզաւր՝ մեծ արքայի ,
յերկրի նըման՝ երկնաւորի :
Լո՛ւր ինձ և դու՝ խոնարհաբար ,
ունկըն մատո՝ լալոյս ձայնի .

Օ՛վ սեփհական՝ ես քո էի,
մայրաքաղաք՝ քում վիճակի·
'Ի քէն շինեալ՝ յիս տաճարի,
անուանակիր՝ քոյդ խորանի·
Հանգոյն վերին՝ ըն սիոնի,
անհամեմատ՝ երկրաւորի:
Բայց այժմ թողեր՝ զիս ամայի,
իբրև ըզքու՝ աւերակի·
Կամ որպէս մարդ՝ անաւգնական,
և 'ի մեռեալս՝ անյիշելի:
Օ՛ր պաղատիմ՝ զարթուցանել,
ըզ զաւրութիւնդ՝ անվանելի,
Հատուցանել՝ բազմապատիկ,
ըզվրէժ 'ի ծոց՝ իմոյն նեղչի:
Ահա՛ գոչեմ՝ առ դրունըս քո,
մայրաքաղաքդ՝ Եգիպտոսի·
Աղէքսանդրո՝ սրդ ցանկալի,
անուանակիր՝ քում շինողի:
Որ ես աթոռ՝ դու մարկոսի,
մեզ աւետեաց՝ քարոզողի·
Որ և դրախտին՝ ա̃ծայնոյ,
տունկ բանաւոր՝ 'ի քեզ տընկի·
Արմաւենիք՝ ծաղկեալ 'ի տան,
հոյլք արդարոց՝ տ̃ն ընծայի·

Եւ որպէս մայրք՝ լիբանանու,
են միանձունք՝ քում Նահանգի․
Հրեշտակերամք՝ և խաչակիրք,
և անմարմնոց՝ նըմանք յերկրի:
Հիմն և արմատ՝ ուղղափառաց,
տարամերժող՝ հերձուածողաց,
Էին գումարք՝ հայրապետաց,
որ առ 'ի քոյդ՝ Նախագահի․
Թէպէտ և չե՛ն՝ այժմ 'ի միջի,
այլ լոկ երա՛զ՝ են գիշերի:
Քանզի եղեր՝ և դու այրի,
կարծեմ նըման՝ ինձ ողբալի․
Երբեմն էաք՝ մեք ըղձալի,
բայց այժմ եղաք՝ յոյժ եղկելի:
Որով հայցեմ՝ ո՛վ բաղձալի,
է՛լ ողբակից՝ ինձ յայս վայրի․
Օ՛հ հաւասա՛ր՝ հանգունակի,
անաւրինաց՝ եղաք գերի:
Արդ մըխիթար՝ յայսմ աղէտի,
մեզ երկոցունցս՝ ո՛յս լինիցի․
Մաքուր մաղթանս՝ աղերսալի,
մատուցանել՝ տն արարչի:
Օ՛հ բարկութիւնն՝ որ ըստ մեղաց,
'ի քաղցրութիւն՝ փոխարկեսցի․

'Ի տեսանել՝ մեզ ըզբարի,
ւ'ի թշնամիս՝ լինել չարի ·
Թէ աստանաւր՝ հաճոյացի,
և եթէ անդ՝ հատուցանի,
Փափագ ըղձից՝ մեր կատարի,
պարգևողէն՝ յամենայնի :
Բանի՛ւ դատմամբ՝ ընդ քեզ կազիմ,
ով Անտոնոք՝ քոյր սիրելի ·
Առաքելոց՝ տուն և տեղի,
յաւետարան՝ ըն մատթէի ·
Յորում անունն՝ ըսքանչելի,
նախ առաջին՝ 'ի քեզ դընի ·
Որ քրիստոնեայն՝ վերակոչի,
երկրըպագուաց՝ըս քրիստոսի :
Ի՛մ մերձաւոր՝ և անձկալի,
յուրախութեան՝ ժամանակի,
Ընդէր չհասեր՝ վաղվաղակի,
ի՛նձ 'ի թիկունս՝ աւգնականի ·
Այլ թոյլ ետուր՝ վասըն խեթի,
մատնել 'ի ձեռս՝ անաւրինի :
Արդ լո՛ւր իմոյս՝ դառըն ձայնի,
և լե՛ր կըցորդ՝ այրման սըրտի ·
Լա՛ց ընդ լալիս՝ յամենայնի,
լե՛ր տըրտմակից՝ թախծեալ սըրտի :

Ըստ առաքելոյն՝ սուրբ հրամանի ,
Լալ ընդ լացող՝ սրն վրշտալը :

---

Սրդ ՚ի ստորին՝ կողմ աշխարհի ,
զոր խաւսեցաք՝ըս շատասցի ·
Բայց բանըս մեր՝ փոփոխեսցի ,
յելս արեւու՝ վերադարձցի ·
Առ մեծըն Հայք՝ տուն Թորգոմի ,
յազգ և ծընուն՝ դըն յաբեթի ·
Մ՛նդ ուր աթոռ՝ պարթեւազանց ,
թագաւորացն՝ արշակունի :
Յորում էի՝ ՚ի սահմանի ,
յառաջագոյն՝ որպէս ասի ·
՚Ի յաբգարու՝ թագաւորէ ,
նոցունց շինեալ՝ ես լինէի :
Նա և նըման՝ զոլ վիճակի ,
առաքելոյն՝ թադէոսի ·
Յորմէ բղխեալ՝ ծաղէկ բարի ,
՚ի շառաւիղ՝ գաւազանի ·
Գրիգորիոս՝ պարթեւազըն ,
լուսաւորիչն՝ այնմ աշխարհի ·
Խոստովանող՝ըն քրիստոսի ,
և մարտիրո՝ սըն կենդանի :

Եւ արդ ո՛ւ քեզ՝ բանիւ բերիմ ,
Հայաստանեա՛յց՝ եկեղեցի ·
Յորում կաթեաց՝ շողն երկնային ,
զպաղըն հալեաց՝ ըղձիւսիսի :
Լոյսն անըստուեր՝ ծաւալեցաւ ,
և ճառագայթն՝ անճառելի .
Սաստիկ եհար՝ ուռամբ ոսկի ,
ձայնք հընչեցին՝ ստորինս յերկրի :
Ը՛նդ հրեշտակա՝ցըն բազմութիւնք · Ղ
յերկնից հեղան՝ ըստ հեղեղի :
Եւ մարդկային՝ ազգ երկրածին
վերասլացան՝ յեթերըն երկնի :
Որ անապատ՝ էիր վայրի ,
եղեր նըման՝ փըթթեալ ծաղկի ·
Եւ կուսական՝ արեամբ ներկեալ ,
պայծառացար՝ ՚ի գոյն վարդի ·
Որդիս ծընար՝ աւազանի ,
որ քան զաւազ՝ շա՛տ էր ծովու ·
Դիեցուցեր՝ կաթն ՚ի ստենէ ,
սնուցեր արեամբ՝ըն կենդանի .
Դաստիարա՛կ՝ մանկանց բարի ,
տալով զաւրէն՝սըն մովսէսի .
Եւ կերակուր՝ կատարելոց ,
զաւետարան՝ըն քրիստոսի :

Յայնժամ էիր՝ երանելի,
այսու ընաւից՝ դու ցանկալի.
Երկնաւորաց՝ և երկրայնոց,
և կենդանեաց՝ բոլոր սեռի:
Բայց հարցանեմ՝ ո՜վ բաղձալի,
բանիւս խնդրեմ՝ պատասխանի.
Տեղեկացո՛՝ զիս հաւաստի,
հարցանելեացս՝ այս ըստ կարգի:
Այժմ ո՞ւր է քո՝ թագըն զարդի,
և կամ պըսա՝կըն հրաշալի.
Ո՛ւր զարդարանք՝ ըն դըշխոյի,
հարսին որդւոյ՝ թագաւորի:
Ո՛ւր պաճուճանք՝ հարսնարանի,
կամ ոսկեհուռն՝ վերջաւորի.
Ե՞ր չէ՛ փեսայն՝ 'ի խորանի,
կամ փեսաւերքն՝ 'ի տաճարի.
Ո՞ւր են մանկունքըն՝ առագաստի,
զի ոչ հընչեն՝ զերգն ըզդաւթի.
Օւա՛րդ լըռեալ՝ ո՛չ հարկանեն.
զփողըն հընչող՝ տարսոնացի:
Ո՛ւր պարարակ՝ եզնամոլին,
զի՞արդ 'ի քեզ՝ ոչ զենանին.
Կամ մատուռակ՝ քըն բաժակին,
զի՞ ո՛չ բաշխեն՝ զանոյշ գինին.

Ո՜ւր բարեկամք՝ ըն զուարճակցին, ձժ
ընդ գիւտ որդւոյն՝ անառակի ·
Կամ տարածեալ՝ գիրկ հայրենին,
առ ՚ի համբոյր՝ մեղաւորին :
Ո՛ւր քաղցրաձայնն՝ երաժշտի,
կամ գեղգեղումն՝ եղանակի ·
Ո՛ւր ընթերցողք՝ ըն սուրբ տառի,
կամ վարդապետքն՝ ՚ի հանդիսի ·
Ո՜ւր է աթոռ՝ հայրապետի,
կամ քահանայքն՝ ՚ի սուրբ բեմի ·
Ո՛ւր սարկաւագքն՝ են ՚ի սպասու,
կամ պաշտաւնեայք՝ պատարագի ·
Ո՜ւր են խընկոցն՝ ՚ի քեզ բուրմունք,
աներեւոյթ՝ ւերեւելի ·
Կամ ժողովոց՝ ըն գումարումն,
յաւուր տաւնի՝ ցըն տէրունի :
Ո՜ւր են գահոյք՝ թագաւորի,
փաղաքշապատ՝ քո քաղաքի ·
Կամ նախարար՝ քըն արքայի,
այրարատեա՝ նըդ գաւառի ·
Ո՜ւր են իշխանքն՝ որ առաջի, ձի
կամ զինակիրքն՝ որ են մերջի ·
Ո՛ւր զաւրականքն՝ յասպարիսի,
կամ լէգէովքն՝ ՚ի ճակատի ·

Ո՛ւր մեծամեծքն՝ ՚ի բազմոցի,
կամ ո՛ւր սեղանն՝ ամենալի.
Ո՞ւր են ազատքն՝ ՚ի տաճարի,
կամ տեառնորդիքն՝ ՚ի ծաղկոցի:
Ահա բարձաւ՝ այս վաղագոյն,
յոյժ հեռացաւ՝ որ չերեւի.
Անուրջք ւ երազք՝ էին յայտնի,
արդ ծածկեցաւ՝ ՚ի զարթմընի:
Այլ փոխանակ՝ այսր ամենի,
յոյժ հակառա՝ կըն տեսանի.
Քանզի նըստիս՝ ո՛րբ և այրի,
տըխուր դիմաւք՝ զերդ ՚ի սըգի:
Վասն այն ըզքեզ՝ իսկ կոչեցի,
լե՛ալ սըգակից՝ ինձ յայս վայրի.
Քանզի նըման՝ քոյն ցուցանի,
իմոյս նորոգ՝ եղեալ չարի:
Արդ ուսուսցես՝ ո՛վ սիրելի,
և զի՛մս ողբալ՝ ըստ արժանի.
Իբրու հըմուտ՝ լալեաց բանի,
և քաջ տեղեակ՝ այրման սըրտի:
Բայց և ըզքեզ՝ յա՛յս հրաւիրեմ,
արևելեան՝ քաղաքդ Անի.
Կըցո՛րդ իմոյս՝ լինել ձայնի,
և ըսփոփիչ՝ տարակուսի:

Քանզի և դու՝ երբեմն էիր,
վայելչական՝ հարսն 'ի քաղս
Մերձաւորաց՝ յոյժ ցանկալի,
հեռաւորաց՝ փափագելի:
Շինեալ եղեր՝ տուն արքունի,
ընտրեալ նահանգ՝ ըստ շարայի·
Թագաւորաց՝ բագրատունի,
որ 'ի ցեղէն՝ իսրայէլի·
Յազգէ սերեալ՝ մեծին Դաւթի,
աստուածահաւր՝ մարգարէի·
Գեղեցկանունդ՝ զարմանալի,
որ երրակի՝ տառիւ բերի·
Երրորդութեան՝ ըն խորհրդի,
որ միշտ 'ի քէն՝ երկրպագի:
Յորում էիր՝ ժամանակի,
բերկրեալ ուրախ՝ և ցնծալի·
Որպէս այգի՝ ողկուզալի,
կամ՛ ձիթենի՝ պտղով 'ի լի·
Մանկունըք քո՝ զուարթալի,
նըման նորոգ՝ բուրաստանի·
Դըստերըք քո՝ պաճուճալի,
յերգ և քընար՝ միշտ 'ի խաղի·
Իսկ թագաւորք՝ քո պանծալի,
նըստեալ յաթոռ՝ թագ 'ի գըլխի:

Եւ զուրականքն՝ աստի ւանտի ,
կալով 'ի սպաս՝ իւր հրամանի :
Նա և որդիք՝ ըզ սիոնի ,
նըման դասուց՝ ըն հրեղինի ·
Յարմարապէս՝ յաւրինուածով ,
կաթուղիկէ՝ եկեղեցի :
Այն որ հանդէտ՝ և հաւասար ,
վերնակառոյց՝ ըն խորանի :
Հայրապետք՝ ւեպիսկոպոսք ,
և քահանայք՝ ւայլք ըստ կարգի ·
Իւրաքանչիւր՝ յիւրում դասի ,
պատշաճաւորն՝ յայն տաճարի :
Օ՛ որ թէ ասելն՝ հարկ լինիցի ,
է դըժուարին՝ ւերկարելն ·
Եւ անաւգուտ՝ այժմոյս բերի ,
յորոց և չէ՛՝ մի 'ի միջի :
Քանզի անցին՝ ըստ երազի ,
որպէս ծաղիկ՝ ամարայնի ·
Եւ այժմ ո՛չ են՝ ւո՛չ երևի ,
ըստ գրեցելոյն՝ 'ի սաղմոսի ·
Իբր ըզյորդեալ՝ յորդ վտակի ,
գարնանաբեր՝ հեղեղատի ·
Կամ զուռուցեալ՝ պըղպըջակի ,
որ ընդ լինել՝ ըն պատառի :

Սո՛ւրբն անողորմ՝ անաւրինի ,
որ մեր արեանս՝ էր ՚ի սովի ·
Որ չէ՛ յագեալ՝ և ո՛չ յագի ,
մինչև ՚ի գալ՝ կատարածի ·
Նո՛յն նա եհաս՝ ուրեմն ՚ի քեզ ,
որպէս յիս յայս՝ ժամանակի ·
Հընձեա՛ց զորայն՝ անդաստանի ,
կանաչաւորն՝ և ՚ի հասկի ·
.Օ այգին խըլեաց՝ արմատաքի ,
մերկեաց յոստոցն՝ ըղձիթենի .
Եհե՛ղ զարիւն՝ սըրբոց յերկրի ,
հոսեաց նըման՝ ջըրոց գետի :
Ա․րար զիա՛կ՝ անթըւելի ,
անթա՛ղ ՚ի կուր՝ գէշ գազանի ·
Քահանայից՝ ըն քրիստոսի ,
արեամբ ներկեաց՝ զեկեղեցի ·
Սարկաւագաց պաշտաւնէից ,
մարմինք անկեալ՝ մէջ փողոցի ;
Եւ ա՛յլ բազում՝ որ ոչ թըւի ,
և է ասելըն՝ անկարելի ·
Որ քեզ հասին՝ յայնըմ վայրի ,
բոլոր ւամեն՝ մասունք չարի .
Եւ ա՛րարին՝ ըզքեզ գերի ,
քան ըզսաղեմն՝ այլ աւելի :

ձէ Վասն այսորիկ՝ ո՛վ անձկալի,
որ ես ներհուն՝ այսր ամենի ·
՚Ի քոյն յայնժամ՝ խիստ աղետի ·
ծանիր և զիմս՝ ողորմելի ·
Եւ որպէս փորձ՝ տարակուսի,
լե՛ր տրտմակից՝ ինձ յայս վայրի ·
Քանզի նըման՝ յոյժ տեսանի,
իմըս քոյոյն՝ հասեալ չարի :
Արդ ժողովեա՛՝ զդըստերըս քո,
վասն իմ ՚ի լաց՝ նի՛ստ ու՚ի սըգի ·
Գոչեա՛ ձայնիւ՝ կականելի,
շարժեա՛ ՚ի յոյզ՝ զամէն հոգի ·
Զի զովացումն՝ այրման սրտի,
ո՛չ է այլ ինչ՝ քան այս լինի ·

~~~~~~~~

Բայց իմ աղէտս՝ այս ցաւալի,
ո՛չ փոքրագոյն՝ դեղով բուժի ·
Եւ ո՛չ միով՝ տեղեաւ փակի,
կամ մասնաւոր՝ մարդկամբ սփոփի :
Այլ կարեկից՝ այսր աղէտի,
պա՛րտ է կոչել՝ աղերսալի,
ձը Զ չորեքծագեան՝ կողմ աշխարհի,
ուր ընդ հանուր՝ մարդկան որդի ·
~~~~~~~~

Օ՜ արեւելս՝ արեւմրտիւք,
և ըղհարաւ՝ ընդ հիւսիւսի ·
Ա՛ռ որս գոչեմ՝ ձայնիւ գուժի,
լալով խաւսիմ՝ զայս ասելի ·
Թէ ազգք ամէն՝ բանաւորի,
ժողովեցէք՝ 'ի մի վայրի ·
Ա՛րք և կանայք՝ հարք և որդիք,
հարսն և փեսայ՝ առագաստի ·
Տղա՛յք մանկունք՝ ւերիտասարդք,
ծերք և հանուր՝ չափ հասակի :
Թագաւորք՝ հանդերձ զաւրաւք,
պէտք և իշխանք՝ տեա՛րք աշխարհի ·
Հայրապետք՝ տեսուչ հաւտի,
կարգեալ իշխանք՝ յեկեղեցի ·
Քահանայք՝ սարկաւագաւք,
և խմբք հանուրց՝ դպերեկոսի ·
Վանականք՝ յանապատի,
որք անմարմին՝ էք 'ի մարմնի ·
Հո՛յլք իմաստուն՝ սուրբ կուսանաց,
որ ցեղակից՝ էք սրովբէի ·
Դա՛սք հանճարեղ՝ վարդապետաց,
և քաղցրաձայն՝ պաշտաւնէից ·
Օ՜րն ողբակից՝ ինձ հրաւիրեմ,
յորդւոց իմոց՝ կոտորածի :

Լացէ՛ք լացէ՛ք՝ բարձրը ձայնիւ,
առ հասարակ՝ յամենայնի․
Օ իս ողբացէ՛ք՝ կողկողալի,
որ էք ծընունդ՝ աւազանի:
Եդեսիէ՛՝ Ուրհայ քաղաք,
որդեկորոյս՝ որբ և այրի․
Կանչեմ առ ձեզ՝ ձայն կանացի,
կականալից՝ ւողորմելի․
Օ քա՛ւղս ՚ի գլխոյս՝ մերկանալով,
զո՛մ պատառեմ՝ ծածկոյթ զարդի․
Փետեմ ըզվարսս՝ իմ ցանկալի,
խըզեմ ըզհե՛րս՝ անխնայելի․
Քարա՛մբ ծեծեմ՝ զկուրծըս սըրտի,
բաղխեմ զերե՛սս՝ իմ յապտակի:
Մ Նըստե՛մ ՚ի սուգ՝ ՚ի տան մըթի,
որպէս աւրէն՝ էսգաւորի․
Եւ փոխանակ՝ որդան զգեստի,
սեա՛ւ ըզգենում՝ գոյն տըխրելի․
Հեղո՛ւմ արտասուր՝ անչափելի,
յորդ և առատ՝ նըման գետի:
Քանզի առա՛կ՝ եղէ յերկրի,
տիեզերաց՝ նախատելի․
Եւ անցաւորք՝ Ճանապարհի,
վա՛յ ՚ի վերայ՝ ասեն վայի:

Զի ո՛չ ծածուկ՝ է ի տեղի,
կամ 'ի յանկեան՝ ինչ թագըստի,
Այլ 'ի գետոցն՝ որ յադենի,
էի բազմեալ՝ ես 'ի միջի ·
'Ի յեփրատայ՝ և տիգրիսի,
որ միջագետք՝ անուանէի ·
Արքայարան՝ մեծ արքայի,
հայ ւասորւոց՝ Աբգարոսի :
Արդ նախ ասեմ՝ զայն որ կրեցի,
'ի ձեռանէ՝ տ՟ն բզբարի,
Ապա զչարիսն՝ որ պատահեաց,
ինձ ըստ մեղաց՝ յանկարծակի :
Դո՛ւք հեզաբար՝ աստ մատուցէք,
զականջըս ձեր՝ իմոյս բանի .
Զոր ծանուցից փոքր 'ի շատէ,
ձեզ ըզգանգատս՝ իմ ըստ կարգի
Ես մա՛յր էի՝ բազմորդութեան,
անթիւ ծընայ՝ դուստր և որդի ·
Զորս մայրաբար՝ դարմանեցի,
իստեանց իմոց՝ կաթն սըբուցի ·
Գեղեցկատիպ՝ յաւրինեցի,
վայելչապէս՝ զարդարեցի :
Քանզի երկիր՝ պարարտ էի,
աղբիւր կաթին՝ յո՛րդ բղխէի ·

Աւետաբեր՝ նըման վայրի ,
ւայլ գերագոյն՝ որպէս թւէի ·
Իւր բարութեամբ՝ լըցեալ կոյի ,
՚ի զանազան՝ բերմունս երկրի ։
Զուր կենդանի՝ յինէն բըղխէր ,
զուարթատեսիլ՝ բոյսս յաւրինէր ·
Ըզբուրաստանս՝ արբուցանէր ,
և ըզմարգիկ՝ ուրա՛խ առնէր ։
Ծոփ ՚ի միջի՝ իմ ծածանէր ,
քաղցրիկ աւդով՝ ըն ծիծաղէր ·
Աղտեղութիւն՝ տըղմին մաքրէր ,
ըզհրապարակ՝ սըն զարդարէր ։
Բազմագունի՝ տունկ յաւրինէր ,
որպէս ըզդրախտն՝ որ յեդեմ էր ·
Աղարթաբեր՝ ծաւալք ծաղկէր ,
առատագոյն՝ պըտղաւետէր ։
Տերեւախիտ՝ հեղի՛կ շարժէր ,
հոտ անմահից՝ յիւրմէն բուրէր ·
Նարդո՛ս քըրքում՝ ինձ ընծիւղէր ,
վարդ մանուշակ՝ վերաբերէր ։
Առաւաւտեան՝ ցաւղն իջանէր ,
ոսկենըման՝ ճաճանչ փայլէր ·
Անհամեմատ՝ յերկրէ նա՛ էր ,
պըտղովքն ամեն՝ զոր ընծայէր ։

Զօր և աւել՝ ոչոք կարէր ,
մի առ միոյ՝ թէ և կամէր :
Զի զանգաստանս՝ իմ թէ գործէր , մ̄ւ
ոք երկրածին՝ և սերմանէր ,
Հարիւրաւոր՝ վաթսունաւոր ,
կամ երեսուն՝ պտղաբերէր :
Տոհմականաւք՝ զոր ընծայէր ,
բազմաբեղուն՝ բարիս բերէր ·
Յըշտեմարա՝նըս ժողովէր ,
այնու զորդիսն՝ իմ կերակրէր ·
Զամենեսեան՝ ուրա՛խ առնէր ,
՚ի բիւր բարիսն՝ որ ընծայէր :
Բայց թէ ըզդիրս՝ իմ յանգաւոր ,
ոք պատմեսցէ՝ պատշաճաւոր ,
Կարծեմ թէ չէ՝ նըմանաւոր ,
այս քաղաքացս՝ որ երկրաւոր :
Լա՛յն և արձակ՝ նըստեալ յաթոռ ,
որպէս ՚ի կա՝ռըս թագաւոր ·
Կամ թագուհի՝ յոյժ գեղաւոր ,
ոսկետըռուն՝ և ճամկաւոր ·
Փողփողելով՝ ՚ի վերջաւոր ,
պայծառազգեստ՝ և պըճնաւոր ·
Շուրջանակի՝ պարառաւոր , մ̄խ
պարիսպ ածեալ՝ լայն և ամուր :

Աշտարակաւք՝ բարձր ահաւոր ,
իմաստապէս՝ ւարուեստաւոր ·
Որպէս գըլուխ՝ըն դիպաւոր ,
մակ հաւասար՝ անձին բոլոր :
Հաստահեղոյս՝ հիմամբ ՚ի խոր ,
մահարձանաւք՝ պըսակաւոր ·
Տունք և տաճար՝ զարմանաւոր ,
շինեալ ՚ի գիրկս՝ իմ գեղաւոր ·
Յարկք և փողոց՝ տեղ վաճառոց ,
գոյր յաւրինեալ՝ հանճարաւոր :
Բայց և գլխորան՝սըն լուսաւոր ,
Թէ ո՛րպխսեք՝ յոյժ փառաւոր ·
Զայն չէ ասել՝ ինձ հնարաւոր ,
կամ հողեղէն՝ մարդ երկրաւոր :
Զի երկնայնոցն՝ էր նմանաւոր ,
վերնագունին՝ հանգիտաւոր ·
Զարմանազան՝ և աննըման ,
զոր չէ՛ տեսեալ՝ ոք բանաւոր :
Ա՛յդպէս կայր՝ յոյժ խընդաւոր ,
զերդ մայր որդւովք՝ բերկրեալ յորդոր ·
Դուստր և որդիք՝ իմ բիւրաւոր ,
զինեւ կային՝ շուրջ պարաւոր ·
Փըրթթեալ վարդից՝ նըման թերթից ,
կամ գեղունակ՝ ճըղած խընձոր ։

Որպէս զայգի՝ մեծ դաշտաւոր,
կամ բարունակ՝ ողկուզաւոր·
Իբր 'ի յանկեան՝ տունկ սորեկորթ·
տեղւոջ պարարտ՝ և զաւրաւոր։
Եւթանասունք՝ խորհրդաւոր,
աւանք պատեալ՝ զինն բոլոր։
Եւ ես բազմեալ՝ զերդ թագաւոր,
կայի 'ի մէջ՝ հանդիսաւոր։

Արդ այս բարիքս՝ որ պատմեցան,
փոքր 'ի շատէ՝ բան ճառեցան·
Որ 'ի յանցեալ՝ դարուն ըսկսան,
և այժմ առին՝ փոյթ ըզվախճան։
Յորում էի՝ ուրախական,
մասին հասեալ՝ երանական.
'Ի տեսողաց՝ ներբողական,
և լըսողաց՝ զարմանական։
Բայց 'ի հասեալ՝ ներկայական,
ժամանակիս՝ որ դիպեցան,
Բարիքն ամէն՝ ըսպառեցան,
և քաղցրութիւնք՝ ըն դառնացան·
Եւ երանի՝ տալոյն փոխան,
զիս եղկելի՝ այժմիկ կարդան։

Թըշնամեաց դասք՝ ըն մեր խընդան ,
և սիրելիք՝ ձայնիւ ողբան .
Գլուխ 'ի վերայ՝ իմ ամբառնան ,
որք 'ի ներքոյ՝ ոտից եղան :
Ա՛զգ որ ծառայքն՝ էին ընական ,
ծընունդք որդիքն՝ աղախնական .
'Ի սառայէ՝ փախըստական ,
հագար ւորդին՝ հալածական .
Օ՛ի մի՛ ժառանգ՝ նա հայրական ,
աբրահամու՝ գոլ սեփհական :
Ա՛յժմ յագատիս՝ վերայ յարեան ,
հանել զոխկէն՝ ըս կամեցան .
մ̃հ Անժառանգել՝ զիս խորհեցան ,
և հալածել՝ յորդւոց մարդկան :
Եւ թէ զի՛մրդ՝ այս գործեցան ,
կամ յի՛նչ իրաց՝ պատահեցան ,
Ժա՛մ է ասել՝ դէմ յանդիման ,
պատմել բանիւ՝ ողբերգական :
Թէպէտ և ո՛չ՝ հընարական ,
ըզըմովանդակն՝ է ասել բան .
Սակայն փոքունք՝ մեզ բաւական ,
յայտնել զաղէտն՝ որ դիպեցան :
Քանզի այգւոյն՝ այն պահապան ,
եդ որ ըստեղծ՝ զիս խնկըզըան .

Եւ աւանդեաց՝ ինձ պատուիրան,
ուստի և կեանք՝ անմահական:
Յայնժամ որդի՝ քըն մայրական,
մարտեան ընդ իս՝ պատրողական.
Տեսեալ 'ի փառս՝ անզուգական,
չա՛ր նախանձու՝ բորբոքեցան:
Յերկիր հանին՝ անիծական,
փուշ և տատասկ՝ յորմէ բուսան.
Մեղաւք լցին՝ անյագական,
սիրոյ մերժեալ՝ յարարչական:
Մինչև հովիւն՝ արիական,
խնդրեաց ըզհաւտն՝ իւր բանական.
Բարձեալ 'ի յուսն՝ աստուածական,
հանել 'ի վեր՝ ուստի անկան:
Սակայն դարձեա՛լ՝ թըշուառացայ,
յերկնից յերկիր՝ կործանեցայ.
'Ի բարձրութեան՝ ցըն վայր անկայ,
խոնարհեցայ՝ և ափշեցայ:
Ըզպատուիրան՝ ըն մոռացայ,
և յաւրինա՝ ցըն հեռացայ.
Բազմատեսակ՝ մեղաւք լցայ,
և չար գործովք՝ աղտեղացայ:
Սողոմնեան՝ խորան եղայ,
և կեղարու՝ անուանեցայ.

Քանզի խէթիւ՝ յիս նայեցաւ,
 լուսն արեւուն՝ եւ սեւացայ:
Արդ վա՛յ ասեմ՝ ինձ ըստ դաւթայ,
 քանզի յերկար՝ պանդըխտեցայ.
Իսկըզբանէ՝ յորմէ ըսկսայ,
 լինել ազգին՝ ցեղին հռովմայ:
Յայնժամ յարեան՝ 'ի յիմ վերայ,
 ազգ եւ ծընուն՝դըն հազարայ.
Յառաջ զօրդիսն՝ իմ զոր ծընայ,
 կոտորեցին՝ 'ի յանխընայ.
Ապա զաւան՝սըն պարագայ,
 որ շուրջ կային՝ զինեւ 'ի ձահ.
Աւերեցին՝ եւ քանդեցին,
 հողաբըլուր՝ թողին վնոսայ:
Եւ այս 'ի յամս՝ էր ոչ սակաւ,
 այլ քառասուն՝ կամ գերակայ,
Յորս 'ի յուժոյ՝ պակասեցայ,
 եւ զաւրութեամբ՝ տըկարացայ.
Հէնք 'ի հինից՝ գային վերայ,
 ասպատակաւ՝ ես գերեցայ.
Պէսպէս ցաւովք՝ հիւանդացայ,
 յախտըս մահու՝ ծիւրեալ անկայ:
Եւ դեղ ցաւոցս՝ իմ ո՛չ գըտայ,
 եւ ո՛չ բըժիշկ՝ որ զդեղըն տայ.

՚Ի դըժոխոց՝ դըունըս հասայ , Ց
Նա և յատա՝կըն մերձեցայ :

---

Արդ զա՛յս տեսեալ՝ բըռնաւորին ,
և կամակոր՝ չար վիշապին ,
Սողայր և գայր՝ նըման աւձին ,
և նենգաւոր՝ թիւնաւորին ·
Աւ ՚ի խայթել՝ գարշապարին ,
և հարկանել՝ գաղտնի նետին ·
Այն որ ղաւղեալ՝ և թագուցեալ ,
ծածկեալ ունէր՝ զնենգն ՚ի մըտին :
Եւ դարանեալ՝ գայըն ՚ի մայրին ,
ինձըն թագչէր՝ յանապատին ·
Որում անուն՝ իւր կոչէին ,
զանկլ՛ չարեաց՝ գործաւնէին :
Յարձակեցաւ՝ յանկարծաւրէն ,
և յեղակարծ՝ ժամանակին ·
Յորժամ տեսին՝ և ծանուցին ,
զիմ զաւրականքն՝ որ աստ չէին :
Յա՛յնժամ պատեաց՝ շուրջանակի ,
զիս պաշարեաց՝ զաւրաւք նորին ·
Արաբացւոց՝ մոխրականին ,
որ ըստ անուանն՝ իսկ ո՛չ թուին :

Ելիմացէք՝ և քեռացէք,
անթիւ բազում՝ լէգէոնին .
Շամբք և հաւտիւք՝ պատեալ կային,
անել ւանմուտ՝ գլխ առնէին .
Միշտ հանապազ՝ մարտընչէին,
աւր ըստ աւրէ՝ գլխ նեղէին .
Զեւ զանազան՝ փոփոխէին,
նոքաւք 'ի մարտ՝ վառեալ գային :
Օըրահաւորք՝ մըկընդաւորք,
ջաւշիւք ծածկեալ՝ բոլոր անձին .
Սունաւորք՝ աղեղնաւորք,
նետիւք հարեալ՝ խոցոտէին :
Պատնէշ կանգնեալ՝ մեքենայիւք,
ըւըմբաքա՝ ըրս հոսէին .
Ծեծէին՝ հարկանէին,
անհընարին՝ տագնապէին :
Բայց այսոքիւք՝ ոչ կարացին,
յաղթել քաջացն՝ որ ջիս կային .
Մինչև 'ի յայլ՝ հընար մըտեալ,
այն խորամանկ՝ նենգաւորին .
Որպէս խըլուր՝ ղըն փորէին,
ներքոյ հիմանն՝ ամրականին .
Սիւնս և նեցուկ՝ հաստատէին,
աշտարակացն՝ և պարըսպին .

Առ 'ի յայրել՝ պատրաստէին ,
որպէս աւրէն՝ էր այս նոցին :
Յայնժամ բարբա՛ռ՝ արձակէին ,
առ ժողովուրդ՝ ըս քաղաքին .
Մի՛ յամառել՝ ասեն 'ի նմին ,
զի մի՛ մահու՝ մեռանիցին .
Այլ տալ յաւժա՛ր՝ և կամովին ,
զի բարութեանց՝ պատահեսցին :
Եւ զայս լուեալ՝ ժողովէին ,
քաջն և արիքն՝ 'ի միասին .
Պընդէին՝ հաստատէին ,
ուխտ և դաշն՝ նըս դընէին .
Ո՛չ յերկուանալ՝ 'ի հանդիսին ,
ո՛չ լըքանել՝ պատերազմին .
Ո՛չ հաւանել՝ բանից նոցին ,
և ո՛չ բանալ՝ կամաւ նըմին :
Այլ բարիոք՝ վարկանէին ,
զի անդանպուր՝ մեռանիցին .
Քանթէ սըրտել՝ մեծի ուխտին ,
և վայելել՝ առ աւրէին :
Մակաբայեանց՝ նըմանէին ,
և վարդանանց՝ պատերազմին .
Մի՛շտ առ միմեա՝ նըս ձայնէին ,
աղաղակաւ՝ զա՛յս ասէին .

Մէ՛ երկիցուք՝ զանգիտելով,
 եղբարք 'ի սրոյ՝ մահկանացուին.
Եւ ընդ քաջացն՝ արիութեան,
 մի՛ խառնեսցուք՝ զերկիւղ վատին :
Անուն բարի՝ ժառանգեսցուք,
 որ ընթանայ՝ յազգ երկրածին .
Անդրդուելի՝ կազմել զհոգին,
 վասըն յուսոյ՝ երկնաւորին :
Մեզ աւրինակ՝ բարեաց ասեն,
 ունիմք բազումք՝ 'ի հանդիսին,
Եզվրկայից՝ըն բազմութիւն,
 որ քան զթիւ՝ գերազանցին :
Որք յաղթեցին՝ չար իշխանին,
 երեւելոյն՝ և անյայտին .
'Ի մարդկանէ՝ այժըմ գովին,
 և յաստուծոյ՝ փառաւորին .
'Ի հանդերձեալ՝ըն պըսակին,
 և արեգական՝ նըման ծագին :
Փոքր ինչ էր վիշտ՝նըն զոր կրեցին,
 անբաւ բարիք՝ որ պարգեւին .
Չարչարեցան՝ 'ի վայրկենին,
 բայց ժառանգեն՝ զյաւիտենին :
Նըմանեսցուք՝ սուրբ վըկայիցն,
 որ քառասունք՝ վերաձայնին .

Որք միաբան՝ ընթանային ,
յաղթող գըտան՝ յասպարիսին :
Մի՛ նըմանել՝ թո՛յլ և վատին ,
զոր բաղանի՝ քըն կորուսին .
Այլ պըսակաց՝ ըն տեսողին ,
իմաստախոհ՝ բանտապետին :
Ջանդխադիր՝ մերոյ մարտին ,
չէ՛ 'ի ցեղից՝ հողեղինին .
Եւ ո՛չ եղաք՝ զյոյս մեր 'ի մարդ ,
մահկանացու՝ և երկրային :
Այլ զաւրագլուխ՝ ըն հրեշտակաց ,
որ է յաթոռ՝ քերովբէին .
Նա՛ յարդարիչ՝ պատերազմին ,
և պարգևիչ՝ յաղթանակին :
Առ որ ունիմք՝ անքակտելի ,
զհաւատ և զյոյս՝ առ սիրելին .
Յորմէ կըրկին՝ մեզ պարգևի ,
թագ և պըսակ՝ բըռա՛բիոնին :
Օ՜ թէ յաղթեմք՝ և պըսակիմք ,
ւանուն բարեաց՝ մեզ քարոզին .
Եւ թէ մարտիւ՝ յաղթահարիմք ,
լուսով հոգիք՝ մեր փայլեսցին .
Ընդ արդարոց՝ ըն դասեսցուք ,
յարքայութեան՝ հաւրըն վերին ,

Յանդըաւական՝ հարսնարանին ,
զոր խոստացեալ՝ է յաղթողին :
Ժե .Օ՜հ թէ աստուստ՝ տարագրեսցուք ,
որ հայրենեաց՝ կոչի գետին ·
Ո՛ր թէ պայծառ՝ յերևելիս ,
և վայելուչ՝ աչաց բերին :
Ա՛յլ փոխանակ՝ անցաւորիս ,
ժառանգեսցուք՝ զանանց բարին ·
'Ի փափկութեան՝ լուսոյ դրախտին ,
յորմէ անկաւ՝ մարդն առաջին ·
Յանմահութեան՝ անախտ վայրին ,
'ի սեփհական՝ մեր հայրենին :
Եւ փոխանակ՝ այս քաղաքի ,
որ է շինուած՝ սա մարդկային ,
Ունիմք շինուած՝ մեք յաստուծոյ ,
անձեռագործ՝ և երկնային .
Որոյ հիման՝ ճարտարապետ ,
ա՛ջ արարչին՝ է անեղին ·
Ա՛յն որ կամար՝ կապեաց զերկին ,
կացոյց 'ի նմա՝ զդասըս վերին ·
Ա՛յն որ զերկիր՝ըս հաստատեաց ,
և զորս 'ի սմա՝ մինչ ոչ գոյին :
Ժզ Ա՛րդ մեք 'ի նա՝ հաստատեցաք ,
զյոյս և զհաւատ՝ և զերկոսին .

Զի թէ կամի՝ և կեցուսցէ,
փառք և պատիւ՝ տացուք նմին.
Ապա թէ ոչ՝ զայս ախորժէ,
այլ տայ 'ի ձեռս՝ անաւրինին,
Յայս առաւել՝ մեք գոհասցուք,
զի տնաւրինէ՝ մեզ ըզբարին :
Որպէս ըզհայր՝ գթած խըրատէ,
վասըն մեղաց՝ մեր որ լինին.
Բայց և դարձեալ՝ մըխիթարէ,
որպէս ընութիւն՝ է այս նորին :
Եւ ըզտըղայս՝ բաբելոնին,
մատնէ զաւրաց՝ քրիստոնէին.
Կալով զոտից՝ մանկանց նորին,
և հարկանել՝ պինդ ըզքարին.
Որ քակեցէք՝ այժմ ասացին,
և մինչ 'ի հիմ՝ըն հասուցին,
Քանդեցին՝ աւերեցին,
և 'ի հիմանց՝ տապալեցին.
Զերդ վաղափուըն՝ աշտարակին, յձ
զոր շինեցին՝ դարձեալ նոքին,
Եւ կամ դըժոխքն՝ անդընդային,
զոր աւերեաց՝ աջ հըզաւրին :
Արդ նոքա զայս՝ և այսպիսիս,
միշտ առ միմեան՝ըս գոչէին .

Իբր ատամունք՝ըն վարագին ,
բանիւ զի՛րեար՝ըս սըրէին ․
Քա՛ջալերէր՝ հայրըն զորդին ,
ւորդիքն ՚ի մարտ՝ պատրաստէին ․
Մի՛շտ հանապազ՝ քարոզէին ,
հրապարակաւ՝ և առ տընին ։
Անդ ո՛չ իշխան՝ էր պատուական ,
և ո՛չ կըրտսեր՝ ՚ի տեղ վերջին ,
Այլ միաբան՝ և հաւասար ,
միախորհուրդ՝ ամենեքին ․
Եպիսկոպոսք՝ և քահանայք ,
իւրաքանչիւր՝ դասք յիւր ցեղին ․
Անդրըդուելըն՝ կա՛լ ՚ի մարտին ,
արիաբար՝ ընդ դէմ չարին ։
ԺԼ Մի՛ երկընչել՝ ՚ի սրոյ նոցին ,
որ սպանանէ՝ միայն զմարմին ․
Այլ յա՛յնմանէ՝ զարհուրեսցուք ,
որ զեհենին՝ տայ զերկոսին ։
Միայն ըզնա՝ մեք սիրեսցո՛ւք ,
որ պըսակէ՝ զի՛ւր սիրելըն ․
Համբերութեամբ՝ ստասցո՛ւք զոգին ,
փո՛րձս ընկալցուք՝ զանպատմելըն ։

Արդ երբև գա՛յս՝ բարբառէին ,
և քաջալերս՝ միմեանց տային ·
Ահա հասցե՛ն՝ մեզ յաւգնութիւն ,
քաջ և արի՝ զաւրքըն վերին ·
Եւ ՚ի Թիկու՝նըս հայէին ,
ընդ Ճանապարհ՝սըն դիտէին ,
՚Ի գիշերի՝ և ՚ի տունջեան ,
միշտ գալըստեանն՝ ակն ունէին :
Թէպէտ և ո՛չ՝ ժամանէին ,
որոց նոքա՛յն՝ ըսպասէին ·
Քանզի յամեալ՝ յապաղեցին ,
որ ընդ հանուր՝ կողմանս էին ,
Գալ յաւգնութիւն՝ իմոյ կոմսին , Ն
երկըրպագուք՝ սըրբոյ խաչին :
Վասն այնորիկ՝ յո՛յժ փութային ,
կողմանք դասուց՝ հակառակին ·
Զի գործ ծածուկ՝ մեքենային ,
փո՛յթ և արագ՝ վըճարեսցին :
Քանզի գիտէր՝ չա՛րն ՚ի յինքեան ,
ո՛չ դիմամարտ՝ լինել նոցին .
Այլ Թէ կանխեալ՝ ժամանէին ,
յանդերձ տեղիս՝ըն փախչէին :
Բայց զի մեղաց՝ըն բազմութիւն ,
որ միշտ առ իս՝ յաճախէին ,

Օ՜այն որ բարեաց՝ մատունքն էին ,
զամենեսեան՝ խափանէին :
Իսկ ըղձարիս՝ մերձեցուցին ,
մինչև 'ի գլուխ՝ զայն հասուցին :
Օ՜որ աստանաւր՝ սիրտ իմ ճըմլէ ,
ւերկկամունք՝ըս գալարին ·
Ցա՛ւ հարկանէ՝ յորովայնիս ,
միտք և հոգիս՝ իմ այլայլին .
Մինչ դեռ յիշեմ՝ զաւրն ահագին ,
և զառաւաւ՝տըն մըթագին ,
Օ՜անլոյս ցերե՝կըն խաւարին ,
որ լուսացաւ՝նըսեմ խորին :
Յորժամ ըղհու՝րըն սողոմին ,
ներքուստ 'ի վեր՝ բորբոքէին ·
Ո՛չ 'ի վերուստ՝ անձրեւածին ,
այլ 'ի ստորին՝ըս փորածին .
Յա՛յնժամ պարիսպ՝ ամրականին ,
վերուստ 'ի վայր՝ կործանէին ,
Եւ 'ի հիմանց՝ տապալէին ,
մա՛ւտ թըշնամեաց՝ըն գործէին :
Այլ քաջ-արիքն՝ ո՛չ կասէին ,
ւո՛չ 'ի փախուստ՝ ինչ դառնային .
Բայց առ միմեան՝ըս ձայն տային ,
քաջալերեալ՝ յորդորէին .

Արիաբար՝ հաստատէին ,
զինուք յանկած՝ըն պարըսպին ·
Դիմել ՚ի մա՛հ՝ խրախուսէին ,
ո՛չ զանգիտել՝ ՚ի սրոյ նոցին :
Այլ որպէս հաւտ՝ հովուապետին , Նի
յաղն երկնային՝ գըրոհ տային ·
Քահանայք՝ եփուտաւորք ,
սուսերաւոր՝ըք լինէին ·
Եպիսկոպոսք՝ըն պատուականք ,
՚ի ձեռս առեալ՝ զնըշան խաչին ,
Հո՛պա եղբար՝ըք սիրելիք ,
մի՛ զարհուրիք՝ առձայնէին ·
Օ մա՛հ ընտրեցէք՝ դուք քաջութեամբ ,
որ քան ըզկեանս՝ է գովելին ·
Ահա հասեա՛լ՝ է մարտաղիրն ,
և յաղթանակն՝ է՛ ՚ի ձեռին ·
Եւ պըսակէ՝ զքաջն և զարին ,
որ յայսմ աւուր՝ մեռանիցին :
Իսկ չարութեան՝ արբանեկին ,
զդասըն վառեալ՝ զաւրականին ,
Հրատարակէր՝ ՚ի լուր նոցին ,
արիանալ՝ յայնըմ մարտին :
Յորմէ պարգևք՝ խոստանային ,
և մեծութիւն՝ յոյժ երկրային ·

ՆԼ Նա և պատիժ՝ պատուհասին,
սպառնայր ածել՝ թոյլ և վատին։
Յայնժամ զինեալ՝ըք լինէին,
գունդըք զաւրաց՝ անաստուածին,
Գազանաբար՝ յարձակէին,
մերձեալ ՚ի մաւտ՝ըն պարըսպին։
Իսկ Նաւրականքն՝ անյաղթելը,
որ անդանաւր՝ հասեալ կային,
Ընդ դիմամարտ՝ գոլով նոցին,
ըզհակաւակ՝սըն վանէին,
Եւ որպէս փայտ՝ ինչ յանտաւին,
յանաւրինաց՝ կոտորէին.
Մինչ զի զահի՝ հարկանէին,
և յետս ընդդէմ՝ նահանջէին։
Բայց երանի՝ զանձնէ իմմէ,
թէ բանք իմ աստ՝ դադարէին.
Եւ ոչ յառաջ՝ այլ խաղային,
ձըմլեալ ըզախրտ՝ըս լըսողին։
Սալ չէ աւգուտ՝ յայսցանէ ինձ,
բանիւ լըսել՝ զորս ՚ի կարգին,
ՆԽ Իբրու արդեամբք՝ ընդ իս անցին,
չարիքս այս մեծ՝ անհընարին։
Քանզի յորժամ՝ ոչ կարացին,
յաղթել քաջացն՝ որ անդ կային.

Յայնժամ վերագն՝ անդընդային,
կոչեաց զռամիկ՝ զաւրականին ·
՚Ի սուր յաւար՝ ւ ՚ի գերութիւն,
ասաց առնել՝ զամենեսին :
Եւ զայն լուեալ՝ արաբացին,
անթիւ զաւրաց՝ բարբարոսին,
Իբրև զեռանդ՝ պրտուտկէին,
շրջա՛ն առեալ՝ շուրջ քաղաքին ·
Օ եռամամբ յեւեալ՝ տագնապէին,
մի՛ առ միով՝ արշաւէին ·
Փողս և քոսեր՝ըս գոչէին,
իբրև յամպոց՝ որոտային ·
Զայնս ահագին՝ըս հընչէին,
մինչ զի զերկիր՝ դըղըրդէին ·
Որ վատասիրտ՝քըն վախէին,
քաջք և արիք՝ խիզախէին ·
Ոմանք ՚ի մահ՝ըն դիմէին,
ւայլք ՚ի յահէն՝ մեռանէին :
Այլ զի նուազ՝ ժողովէին,
ւ ո՛չ բաւական՝ըս պարըսպին,
Եւ այն դատեալ՝ վաստակէին,
՚ի յանդադար՝ պատերազմին ·
Քանզի տեւեալ՝ ժուժկալեցին,
իբր ամսաւրեայ՝ գոլով մարտին :

Վասն ա՛յսորիկ՝ տեղ ինչ մասին ,
՚ի պահպանաց՝ թափուր գրտին .
Յորում ելեալ՝ բարձրանային ,
սակաւք ոմանք՝ յաշտարակին :
Իսկ ժողովուրդ՝ըք քաղաքին ,
զա՛յն ինչ տեսեալ՝ զարհուրէին .
Ձայնըս գուժի՛՝ արկանէին ,
և ՚ի փախուստ՝ըն դառնային :
Եւ ապա զի՞նչ՝ կամ ո՛րպիսի ,
անդ տեսութիւն՝ դժուարելի :
Քանզի խուժան՝ անաւրինին ,
իբր ըզփախուստն՝ըն զայն տեսին ,
նկ Սուսերամե՛րկ՝ըք լինէին ,
մէջ քաղաքին՝ յարձակէին :
Եւ ժողովոց՝ըն բազմութիւն ,
մի ըզ միոյ՝ հետ կասէին .
Որք առաջին՝ ընթանային ,
մինչև ՚ի դրուն՝ըս դղեկին :
Իսկ մարդադէմ՝քըն գազանաց ,
ըզ սայրասուր՝ըն քամէին ,
Եւ որպէս գայլք՝ ՚ի հաւտ գառանց ,
՚ի մէջ նոցունց՝ անկանէին .
Առ հասարակ՝ կոտորէին ,
արեան վըտակ՝ըք հոսէին .

Զերիտասարդս՝ և ըզ մանկտին,
անխնայապէս՝ խողխողէին :
Յալիս ծերոցն՝ ո՛չ գըթային,
և ո՛չ ՚ի հասակն՝ըն տղային .
Ո՛չ ՚ի պատիւ՝ քահանային,
ո՛չ յաշտիճան՝ հայրապետին .
Մինչ զի արեան՝ ցըն ճապաղին,
ծերոցն ալիք՝ ներկանէին :
Եւ քահանայք՝ըն խորհըրդին,
՚ի սուրբ արեան՝ կենարարին,
Զարինս իւրեանց՝ յայն խառնէին,
և ընդ նոսին՝ թաւթաւէին :
Քանզի արեանն՝ էր ծարաւի,
և արբեցաւ՝ սուրըն նորին .
Առիւծ գոչեաց՝ ՚ի յանտառին,
և գիշախանձ՝ արջըն ՚ի բայլին :
Բայց ըզհանդէպն՝ ողորմագին,
որ դառնագոյն՝ է լըսողին,
Չէ բաւական՝ բան ասողին,
պատմել զաղէտ՝ըն սաստկագին :
Քանզի յորժամ՝ գայլքըն մըտին,
և շունքըն լիրբք՝ պաշարեցին,
Զհաւտ ոչխարաց՝ըն ցրուեցին,
զանմեղ գառինս՝ պատառեցին :

Յա՛յնմ երկխուղէ՝ զարհուրէին ,
բարձր 'ի դըղեակ՝ըն դիմէին :
Իսկ չարութեան՝ արբանեկին ,
որ պաշտապան՝ էր կռային ,
նձ Ըզգըրունս ընդդէմ՝ եդեալ նոցին ,
ո՛չ թողացոյց՝ըզմուտ բերդին :
Եւ բազմութիւն՝ փախըստէին ,
յահէ սըրոյն՝ խուսափէին .
Ա՛մենեքեան՝ ա՛նդ փութային ,
իբր յապաւէն՝ անկանէին .
Մի ըզմիոյն՝ անցանէին ,
առ 'ի ձեպոյն՝ տագնապէին :
Եւ զի փակեալ՝ մուտն առաջին ,
և թըշնամեաց՝ սուրըն վերջին ,
Յա՛յնժամ առ դուր՝սըն կուտէին ,
իբրև ըզշեղջս՝ անհընարին .
Կամ յաւրինակ՝ մայրեաց փայտին ,
միմեանց վերայ՝ դիզանէին .
Ա՛րք և կանայք՝ ծերք և տըղայք ,
մանկունք ւ ամեն՝ չափ հասակին :
Դըստերըն 'ի մարց՝ լային գըրկին ,
և ընդ լալոյն՝ նուաղէին .
Մարքն ըզտըղայսն՝ընդ գըրկէին ,
ւ 'ի միասին՝ մեռանէին :

Չարքն ընդ որդւոց՝ տառապէին, Նշ̅
Թէ փրկութեան՝ հասանիցեն.
Որդիքն ընդ հարց՝ըն ջանային,
զի 'ի յանդորր՝ ելանիցեն:
Այլ զի չէ՛ր ոք՝ նըպաստ նոցին,
ո՛չ ձեռընտու՝ 'ի յայն վայրին.
Միայն յերկինս՝ ամբառնային,
զաչըս մըտաց՝ կողկողագին:
Եւ զի խաւսել՝ ո՛չ կարէին,
յոգոց հանել՝ըն հեղձնուլին.
Եղբայր եղբաւր՝ ո՛չ աւգնէին,
և ո՛չ 'ի քոր՝սըն գըթային.
Թէ և կարի՝ յոյժ սիրէին,
ւաղէկոտոր՝ իսկ լինէին.
Բայց փրկութեան՝ ձեռն ո՛չ տային,
զի և շարժել՝ ո՛չ կարէին:
Իւրաքանչիւր՝ յիւրում տեղւոջ,
ուր պատահեացն՝ անկանէին.
Եւ 'ի շընչոյն՝ նուազութեանց,
հեղձամըղձուկ՝ անդ լինէին:
Իսկ փախըստեայքն՝ ըշտապէին, Շ
յահէ սըրոյն՝ զարհուրագին.
Եւ յանկելոց՝ դիակունին,
կէսքն ընդ ոտիւք՝ ընթանային.

Որպէս 'ի գետ՝ կամ 'ի ծովս,
վերայ գըլխոց՝ըն լողային:
Բայց այլազգեաց՝ըն բազմութիւն,
որ սուսերաւքն՝ 'ի հետ գային,
Իբրև գազան՝ըս վայրենիս,
'ի մէջ հաւտիցն՝ անկանէին.
Իւրաքանչիւր՝ ոք ըստ մըտին,
առ յընտրութիւն՝ պարապէին:
Քանզի զոման՝ըս գերէին,
որ գեղեցիկ՝ դիմաւքն էին,
Աւ յուստերաց՝ և դըստերաց,
ընդ որ ինքեան՝քըն հաճէին.
Իսկ ըզ լըցեալ՝սըն հասակաւ,
զայն չարաչար՝ խողխողէին:
Եւ զխեղդելոց՝ դիակուտին,
մարմինսն արտաք՝ըս քարշէին.
Զորս զըննէին՝ կողոպտէին,
մերկ խայտառակ՝ զայն թողուին:
Ո՛չ պատանաւք՝ զոք պատէին,
ո՛չ վերակուս՝ արկանէին.
Աւրինաւոր՝ ո՛չ թաղէին,
և ո՛չ կոծովք՝ յուղարկէին:
Անդ ո՛չ գոյր երգ՝ քահանայի,
և ո՛չ հընչումն՝ աստուածային.

Ո՛չ պաշտաւնեայք՝ սաղմոսէին,
ո՛չ սարկաւագք՝ ընթեռնուին:
Թէպէտ յերկինս՝ հոգիքն ելին,
և յաստուծոյ՝ են 'ի ձեռին .
Որոց անուանք՝ըն դրոշմէին,
'ի դրպրութեան՝ կենաց գրքին .
Սակայն մարմինքն՝ անպատուէին,
զի յապաժոյժ՝ թաւալէին:
Զորս ընդ քարին՝սըն հոսէին,
իբրև ըղձէշ՝ անասնային .
'Ի գազանաց՝ գիշատէին,
և կերակուր՝ շանց լինէին:
Զորմէ պատգամք՝ մարգարէին,
յառաջագոյն՝ գուշակեցին .
Յերուսաղէմ՝ խաւսեալ բանին,
որք և առ իս՝ կատարէին .
Զարիւն սրբոցն՝ յերկրի հեղին,
որպէս հոսանք՝ ջուրց վտակին .
Ըզ քահանայն՝ և զժողովուրդն,
առ հասարակ՝ խողխողէին :
Չորից ազգաց՝ քրիստոնէից,
գըլուխք հաւտից՝ որ աստ կային .
Դողմատեանըն՝ և Թորգոմին,
յունականըն՝ և ասորին .

Առ հասարակ՝ զանձինս եդին,
մինչև ՚ի մահ՝ զուն գործեցին,
Քա՛ջ և արի՝ հաւատապետին,
գործովք բարեաց՝ նըմանեցին :
Ո՛չ վարձկանաց՝ նըման փախեան,
՚ի տեսլենէ՝ չար գազանին .
Եւ ո՛չ զհաւ՝ տըրն մատնեցին,
և կամ զանձինս՝ ապրեցուցին .
ԾԷ Այլ քաջապէս՝ հարկանէին,
ընդդէմ գայլոյն՝ պատառողին :
Մինչ զի ՚ի նմին՝ պատերազմին,
արիացեալ՝ ՚ի հանդիսին,
Զուովմայեցւոց՝ հաւատապետին,
զանձն իւր ՚ի մահ՝ ետ ընդ հաւտին .
Եհեղ զարիւն՝ իւր ընդ նոսին,
նըման յուդա՝ մակաբէին .
Եղէազարն՝ այն առաջին,
որ քահանայն՝ էր ըստերին .
Բարեբարոյն՝ ըստ զովեստին,
և ծերունին՝ ըստ հասակին :
Նա և զհայոց՝ ազգաց ցեղին,
եպիսկոպոս՝ ընտրեալ նոցին .
Թէպէտ մահու՝ ոչ մատնէին,
ըստ խընամոց՝ բարերարին .

Զայն որ պահեաց՝ 'ի մէջ կուտին,
որպէս զյովնան 'ի փոր կիտին ·
Սակայն յոքունց՝ 'ի հանդիսին,
յաղթող գտաւ՝ յասպարիսին ·
Անձամբ տուեալ՝ զանձն իւր 'ի մահ, շէն
իբր յաւրինակ՝ հաւատապետին :
Բայց զի հընար՝ ո՛չ լինիցին,
զոր աստանաւր՝ կատարեցին,
Մի ըստ միոյ՝ գրել բանիւ,
չիւրաքանչիւր՝ զոլեստ անձին :
Զի այս անկար՝ շարագրողին,
և անհընար՝ բանաւորին ·
Ո՛չ թէ տըկար՝ միայն անձին,
և անտեղեակ՝ քերեալ տառին,
Այլ և նոցունց՝ ներ արհեստին,
որ պանծալիք՝ գոլով սովին :

Բայց մեք 'ի կարգ՝ անդր առաջին,
դարձեալ սկըսցուք՝ աստ վերըստին ·
Մինչև յանկեալ՝ վախճանեսցի,
պատմեալ աղէտս՝ ողորմագին :
Քանզի իբրև՝ շունըք հասին,
և ցուլըք գէրք՝ պաշարեցին,

Անմեղ զաւանց՝ ՚ի հետ մըտին,
խեղդմամբ և սրով՝ վախճանէին։
Որք յայնմանէ՝ զերծանէին,
սակաւք ՚ի դղեակն՝ ամրանային.
Յոր հո՛ւպ եկեալ՝ բռնաւորին,
զայս ասելով՝ բա՛ն առ նոսին·
Իմո՞ւմ լծէ ո՛չ՝ լուէք բանին,
և հնազանդեալ՝ տայք ՚ի ձեռին,
Լինի՛ք և դուք՝ նըման սոցին,
անկեալըք գէշ՝ գազանային։
Բայց նոքա ո՛չ՝ զանգիտէին,
և տալ ՚ի յանձն՝ ո՛չ առնուին,
Այլ քաջապէս՝ յո՛յժ պընդէին,
արիաբար՝ հաստատէին։
Սակայն զի ո՛չ՝ յառաջագոյն,
անդ կերակուրք համբարեցին,
Եւ ո՛չ ըղջուրմն՝ որ ՚ի ներքուստ,
վերաբերեալ՝ պատրաստէին։
Նաև զաւրաց՝ քրիստոնէին,
որք ժողովեալք՝ ՚ի միասին,
Զարա՛ր տեղեակ՝ ոք ըզնոսին,
թէ ահա մերձ՝ գա՛ն և հըպին։
Վասն այսորիկ՝ ո՛չ կարացին,
տեւել յերկար՝ ընդդէմ չարին,

Այլ յետ աւուրց՝ ինչ պայմանին,
տուեալ արտաքս՝ ելանէին :
Իսկ դիւաբնակ՝ նենգաւորին,
և խորամանկ՝ չա́ր խաբողին,
Զուխտըն սրտեալ՝ զոր եդ նոսին,
որպէս բնութիւն՝ էր այս նորին :
Ընտրէր ըզդասս՝ զաւրականին,
յորոց ունէր՝ խոց 'ի սըրտին .
Տա́յր նըշաւակ՝ կանգնեալ յոտին,
նետիւք խոցէր՝ իւրով ձեռին :
Զոր յաղթութիւն՝ յապագային,
մեծ վարկանէր՝ իւրոյ անձին .
Նա և վարձուց՝ փոխարինին,
ըստ ժանտագործ՝ աւրինադրին :
Զինքըն կարծէր՝ ողորմելին,
վըրէժխընդիր՝ երկնաւորին .
Որում նուէր՝ աստուածային,
մատուցանէր՝ զարիւն նոցին .
Որպէս և բան՝ըն տէրունին, շՆ
յառաջագոյն՝ գուշակեցին :
Այդ եբրև զայս՝ կատարեցին,
զորս 'ի շատէն՝ փո́քր ասացին,
Ըզգերելոցն՝ որ գերեցին,
և զորս արեամբ՝ սրով ըսպանին .

Օ՜ յինչս և ըզգոյս՝ կողոպտէին,
զհարց և զհաւուց՝ զորս պահէին.
Օ՜ ոսկիակուռ՝ զարդ կանացին,
և զպատուական՝ հանդերձանին.
Օ՜ արծաթեղէն՝ զոսկեղէնին,
զանաւթ սրբոյ՝ պատարագին.
Օ՜ ունակ բուրման՝ անոյշ խընկին,
և զհընչեցող՝ քըշոցանին.
Ըզ վարագոյր՝սըն խորանին,
և զհանդերձան՝ըս սեղանին:
Օ՜ քահանայից՝ զարդ հանդիսին,
զհայրապետաց՝ պատմուճանին.
Ըզպատուական՝ նափորտանին,
զեմիփորոն՝ սուրբ խորհրդին:
Օ՜ ոսկէնըկար՝ տիպն ուրարին,
այն որ զուսովք՝ըն պատէին.
Օ՜ ականակապ՝ քառակուսին,
որ էր նըման՝ սուրբ վակասին.
Օ՜ բազմագունեան՝ գործ հրաշալին,
այն որ 'ի քղանց՝ըս հանդերձին.
Եւ զայլն ամէն՝ որ ըստ կարգին,
որոց ողըումն՝ է յիշելին:
Որովք 'ի տաւ՝նըս տէրունին,
վայելչապէս՝ զարդարէին.

Իբրև փեսայ՝ յառագաստին,
 կամ որպէս հարսն՝ 'ի տաճարին:
Քահանայք՝ սարկաւագունք,
 կարգ ըստ կարգի՝ պար առնուին,
Եւ հայրապետն՝ այն 'ի միջի,
 որպէս գլուխ՝ բոլոր հաւտին,
Շրջան առեալ՝ յեկեղեցին,
 մեղմաւրինակ՝ անդ ճեմէին:
Իսկ ժողովոց՝ըն բազմութիւն,
 արք և կանայք՝ որ անդ կային.
Ըզհետ հետոց՝ ընթանային,
 որպէս և հաւտն՝ ըզկնի հովուին.
'Ի մի բերան՝ փառաւորէին,
 զերգս 'ի բարձունս՝ առաքէին.
Ընդ անմարմնո՝ցըն սրովբէից,
 զերեք սրբեան՝ըն հընչէին,
Զերրորդութիւն՝ըն գովէին,
 զմի տէրութիւն՝ դաւանէին:
Արդ փոխանակ՝ այսր ամենի,
 դո՛ւք լուարուք՝ զի՛նչ լինիցի.
Կամ դառնաբեր՝ պըտուղ չարին,
 զո՛րս ընդ որոց՝ փոխարկեցին:
Զի հեթանոսքն՝ իբրև մըտին,
 և զիս արեամբ՝ զետով լըցին.

Օ՜ իմ գեղեցիկ՝ ծընեալ զորդիսն ,
մատ ՚ի գըրկիս՝ խողխողեցին :
Յայնժամ պըղծեալք զարշապարաւ ,
ըզսըրբութիւնս՝ իմ կոխեցին ,
Ըզ սուրբ տաճար՚ըն պըղծեցին ,
և ըզ սեղանս՝ կործանեցին :
Ո Եւ զտէրունեան՝ նըշան խաչին ,
ոտից կոխան՝ զայն առնէին ·
Եւ ըզպատկերս՝ աստուածային ,
մարմնացելոյ՝ հաւըրըն բանին ,
Եւ զսըրբուհւոյ՝ ածածնին ,
և զայլ սըրբոցն՝ որ ըստ կարգին ·
Կոխէին՝ ու անարգէին ,
հայհոյութեան՝ բան ասէին :
Իսկ առաջնորդք՝ չարեաց նոցին ,
որոց մամուլս՝ անուանէին ,
՚Ի բարձրութիւնս՝ ելանէին ,
ուր ըզ զանգակ՚սըն հընչէին ·
Զայնիւ մեծաւ՝ անդ գոչէին ,
աղաղակաւ՝ զայս ասէին ·
Թէ այսաւր քեզ՝ մեծ աւետիք ,
մահմէտ պատգամդ՝ երկնաւորին ·
Դարձեալ առաք՝ զոր կորուսաք ,
զքո սեփհական՝ զտուն և զտեղին ·

Յա՛յս մոլորեալ՝ ժողովրդոցս ,
երկրպագւաց՝ անշունչ քարին ·
Զորոց արեամբ՝ լցաք զերկիր ,
ըստ հրամանի՝ քում ղուրանին :
Ահա և քե՛զ՝ ձայն աւետեաց ,
մեծըդ մաքքա՛յ՝ տուն մահմետին ·
Յորում է յոյսն՝ ՚ի սեւ քարին ,
և հետեւում՝ըն մի ոտին :
Զի այժմ առ քեզ՝ փոփոխեսցուք ,
զերկրպագումն՝ արեւելին ,
Ըզմոլորեալսն՝ զհետ խաչին ,
և զպաշտաւնեայ՝սըն յիսուսին :
Զա՛յս ասելով՝ խրախճանային ,
երգս և խընճոյս՝ յաւրինէին ·
Ծա՛փըս ծափի՝ հարկանէին ,
ոտիւք վազեալ՝ կաքաւէին :
Այլք ՚ի չարին՝ արբանեկաց ,
որոց ղազիքն՝ անուանէին ,
Իբրև ըզշուն՝ըս կատաղիս ,
յորսոց վերայ՝ յարձակէին ·
Զարիւնս առեալ՝ զըսպանելոցն ,
զանձինս իւրեանց՝ աւծանէին ·
Եւ զորովայն՝սըն հերձէին ,
զլեարդսն հանեալ՝ խածատէին ·

Եւ ըզգըլուխ՝սըն քերթէին ,
ու 'ի խորասան՝ զայն տանէին ,
Զ'ի 'ի նոցունց՝ վարձս ընկալցին .
ընդ սպանելոյ՝ըն համարին :
Իսկ անաւրէն՝ պիղծ վիշապին ,
և չարաթոյն՝ բըռնաւորին .
Ա՛յն որ նըման՝ գոլով նեռին ,
եղջիւրամբարձ՝ դէմ արարչին ,
Արհամարհեաց՝ զյարկ տաճարին ,
զաստուածընկալըն՝ և զհրաշալին .
Զանուանակիր՝ըն յովհաննու ,
ըզ մըկըրտիչ՝ մարգարէին .
Կամ զաւետեաց՝ քարոզ բանին ,
ի՛բր համանուն՝ գոլ երկոքին :
Եմուտ անդ զա՛րշն՝ և պըղծալին ,
արիւնահեղն՝ և նենգով լի՛ն .
Հանդերձ զաւրաւքն՝ որ ընդ նըմին .
պաշտաւնէիւ՝քըն մահմէտին :
ոլ Եւ 'ի սեղանն՝ աստուածային ,
յոր միշտ զենոյր՝ ա՟ծորդին ,
Հա՛րճըս նըստոյց՝ երգել 'ի նմին ,
և զինարբուս՝ ըստ հերովդին :
Ա՛նդ ուր հրեշտակ՝քըն հընչէին ,
և սերովբէք՝ սաւսաւնէին ,

Յոր քերովբէքն՝ ակումբ կային,
և պետութիւնք՝ըն սարսէին.
Յորժամ երկնից՝ թագաւորին,
գալուստ լինէր՝ յեկեղեցին.
Եւ անարատ՝ և սուրբ գառինն,
հեղոյր արիւնն՝ 'ի սեղանին.
'Ի հաշտութիւն՝ հաւրըն վերին,
և 'ի քաւութիւն՝ մեղաւորին:
Բայց ո՛չ միայն՝ անդ առնէին,
զանարգութիւնսն՝ որ ասացին,
Այլ յամենայն՝ խորանս սրբոց,
որք աստանաւր՝ շինեալ կային:
Յիւրաքանչիւրս՝ մըտանէին,
ըզսըրբութիւն՝սըն պըղծէին.
Գո՛րծ գարշութեան՝ անդ գործէին, ո՜խ
զոր ուսուցեալ՝ էր մահմետին.
Զոր և խաւսելըն՝ է աղտեղի,
լըսելըն գա՛րշ՝ սըրբասիրի:
Զոմանս ուղտոց՝ տուն առնէին,
և զայլս իշոց՝ և երիվարին.
Յոմանս ինքեանք՝ բընակէին,
որ են վատթար՝ քան զանբանին:
Արդ իբրև զայս՝ կատարեցին,
ըստ թոյլ տալոյ՝ բարերարին.

Օ՜ որ համառաւտ՝ և ծայրաքաղ,
փո՛քր ինչ ցուցաք՝ զաղէտս իրին :
Յայնժամ զգերեալ՝սըն բաշխէին,
մի առ միոյ՝ պարգեւս տային,
՚Ի հեռաւորսն՝ արձակէին,
զգեղեցկատիպսն՝ որ ընտրէին ·
Բաբելացւոց՝ Թագաւորին,
և ՚ի խորասան՝ մեծ սուլտանին,
Անոտի՛ մոլար՝ խալիփային,
կո՛յր և կուրաց՝ առաջնորդին :
ոծ Որ է յաթոռ՝ըն մահմետին,
սո՛ւտ մարգարէ՝ խաբեբային ·
Խաւարելոցն՝ աւրինադրին,
չարեա՛ց մեղաց՝ ուսուցողին :
Ա՛յն որ գործէ՝ զաղտեղութիւն,
զանասելին՝ մարդոյ լեզուին ·
Ուսուցանէ՝ իւր ժողովին,
գործել ըղնոյն՝ ըզպըղծալին :
Եւ քաւութիւն՝ մեղաց նոցին,
աւրինադրէ՝ ըզ գըզւելին,
Ողողանել՝ ջըրով գետին,
մաքրել միայն զերեւելին ·
Որով և կէտք՝ որ ՚ի ծովին,
առաւելուն՝ քան ըզնոսին .

Իսկ ըզհոգւոյն՝ վայելչութիւն ,
մեղաւք թաղեն՝ միշտ 'ի տըղմին :
Արդ այսպխոյս՝ լո՛ւր աւետեաց ,
գըրով հընչէր՝ յականջս Նորին ,
Թէ աւետի՛ք՝ քեզ խընդալից ,
ահա՛ զըպաշտաւնք՝ բարձի խաչին .
Եւ ըզքաղաքս՝ ամուր նոցին ,
տապալեցի՝ հի՛մն յարեւին :
Բայց ա՛յս ընկէ՛զըն՝ իմոյ մարտին ,
որ վասըն քոյդ՝ է հաւատին .
Եւ ըռասուլ՝ քոյոյ Նախնոյն ,
պատգամաւոր՝ փըղամբարին :
Այլ դու յեշեա՛՝ զիս յուրբաթին ,
'ի յաղաւթելըն՝ 'ի մըզքըթին .
Զի ես գյեսայ՝ վաղվաղակի ,
յերկրէ բառնամ՝ իւրն ազգովին .
Եւ սատակէմ՝ զամենեսին ,
որք դաւանեն՝ զա՛ծ որդին :

Արդ զայս գըրէր՝ ա՛նդըր 'ի հեռւին ,
ւ ինքըն փըրքայր՝ ոգւով չարին ,
Խորոխտա՛յր Նըման՝ ըռափսակին ,
խորհէր ջընջել՝ զազգս որ կային :

Ո՛չ գիտելով՝ զայս յիմարին ,
և ո՛չ ըզմըտաւ՝ ածեալ կուրին .
Թէ ո՛չ ուժով՝ իւրոյ բազկին ,
կամ զաւրութեամբ՝ իւր պինդ կընտին ,
Եղև զուռհա՝ առնուլ նըմին ,
մատնել ՚ի սուր՝ և ՚ի գերութիւն .
Այլ իմ մեղա՝ցըն բազմութիւն ,
և յաճախել՝ գործոց չարին ,
Մատնեաց ՚ի ձեռս՝ անաւրինին ,
խիստ և ապըստամբ՝ ըռնաւորին :
Որպէս երբեմն՝ըն վաղագոյն ,
սոյն այս լինէր՝ իսրայէլին .
Պատւիրելով՝ տեառըն նոցին ,
՚ի ձեռըն սուրբ՝ մարգարէին .
Թէ ախորժէք՝ և լըսէք ինձ ,
դուք ժառանգէ՛ք՝ ըզբարութիւն .
Ապա թէ ո՛չ՝ լըսել կամիք ,
զձեզ կերիցէ՝ սուր գերողին :
Դարձեա՛լ բանիւ՝ աստուածային ,
խաւսի դաւիթ՝ ՚ի սաղմոսին .
Եթէ թողցեն՝ որդիքըն քո ,
զաւրէնս եղեալ՝ իմ հրամանին ,
Զաւազանաւ՝ըս բարկութեան ,
հարում ըզմեղըն՝ որ գործեցին :

Իբրեւ յառակ՝ ժամանակին , ոձ
յեբրայեցւոցն՝ առնէր ազգին ,
Օ՛յն որ եհան՝ յեգիպտոսէ ,
անցոյց ընդ մէջ՝ կարմիր ծովին ·
Եւ զմանանայն՝ յանապատին ,
իջոյց յերկնից՝ նման ձիւնին ·
Որոց ՚ի տուէ՝ ամպ հովանին ,
եւ սիւն հրոյ՝ լոյս գիշերին ·
Եւ խոստանայր՝ տալով նոցին ,
զորս աւետեաց՝ երկիր կոչին :
Բայց իբրեւ ո՛չ՝ նոքա կացին ,
յաւրէնս եդեալ՝ պատուիրանին ·
Այլ զարարիչն՝ իւրեանց թողին ,
որթոյն գլխոյ՝ երկիր պագին ·
Ընդ մաղխամ՝ խառնակէին ,
եւ պղծութեամբ՝ զերկիր լցին ·
Էարկ տապաստ՝ յանապատին ,
երդուաւ ՚ի յաջ՝ իւր կենդանին ·
Ե՛թէ մտցեն՝ անդր ՚ի հանգիստ ,
նոքա որ զիս՝ դառնացուցին :
Որք եւ յերկիր՝ըն պարգեւաց , ող
մի՛ յայնցանէ՝ անդ ո՛չ մտին ,
Այլ ջընջեցան՝ ա՛նդր ՚ի վայրին ,
ոսկերքն անկան՝ յանապատին :

Թողո՛ւմ ասել՝ զտապանակին,
զոր 'ի հեղեայ՝ որդւոցն առին,
Վասըն չարեաց՝ գործոց նոցին,
զոր առ խորան՝ըն գործեցին:
Յորս երեսուն՝ հազար դասին,
ա՛յն աւր անկան՝ յիսրայէլըն.
Նոյն և հեղեայ՝ քահանային,
պատուհասեալ՝ բեկմամբ ողին:
Հեբրայեցի՛ք՝ դարձեալ նոքին,
որ յակովբեան՝ որդիքն էին.
Յորժամ յերկիր՝ բըղխիչ կաթին,
ըստ աւետեաց՝ հարցըն մըտին.
Եւ ստւարացեալ՝ գիրանային,
զուխտն առաջին՝ մոռանային:
Օ որս մարգարէք՝ըն խրատէին,
և զգալ չարեաց՝ բողոքէին.
2 Պատասխանիս՝ խի՛ստ առնէին,
և 'ի տաճա՝րըն պանծային:
Յայնժամ հոգին՝ աստուածային,
զա՛յս բարբառէր՝ ընդդէմ նոցին.
'Ի սըրբութեա՛նցս՝ իմ ըսկսանիմ,
ածել զաւերն՝ 'ի տաճարին:
Յորս 'ի հարկէ՝ շարժեալ բարին,
'ի դառնութիւն՝ վասըն նոցին.

Իա՛ծ հասոյց՝ զքաղդէացին ,
մատնեաց 'ի ձեռն՝ անաւրինին :
Օ երուսաղէմ՝ քաղաքն ընտրեալ ,
առին յաւար՝ և 'ի գերութիւն ·
Եւ ըզտաճարն՝ ըզհրաշալին ,
զայն որ շինեալ՝ սողովմոնին :
Ըզ կեփազեան՝ ոսկին առին ,
զկազմած զարդնին՝ կողոպտեցին ·
Եւ զժողովուրդ՝ըն սեփհական ,
գերի առեալ՝ խաղացուցին ·
'Ի հետիո՝տըս տանէին ,
քաղց և ծարաւ՝ պանդըխտէին ·
'Ի բաբելոնն՝ նըստեալ լային ,
մինչ ըզսիոնն՝ անդ յիշէին :
Եւ ա՛յլ բազում՝ են որ պատմին ,
մեզ յաւրինակ՝ նախ քարոզին ·
Թէ չըլինայէ՝ յիւր սիրելին ,
'ի ստունգանել՝ պատուիրանին ·
Այլ և խրատէ՝ նա սաստկագին ,
յոյժ առաւել՝ քան զատելին :
Որպէս և հայր՝ըն զիւր որդին ,
փութայ խրատել՝ ու ո՛չ զաւտարին ·
Կամ ըստ երունեան՝ սուրբ առակին ,
յիւրաքանչիւր՝ըն ծառային :

Կամացըն տեառ՝ըն գիտողին ,
և արժանի՝ գործել տուժին ·
Ըմպել ասէ՝ զան բազմազին ,
քան զայն որ ոչ՝ գիտէր բնաւին :
Ուրեմն այս ինձ՝ պատահեցին ,
ըստ իրաւանց՝ եկին հասին .
Քանզի լըցայ՝ գործովք չարին ,
և չարարի՝ զկամըս նորին :
ՀԵ Այլ հաւասար՝ ազգ մարդկային ,
ամենեքեան՝ որ յիս կային ·
Իւրաքանչիւր՝ յիւր հասակին ,
յանդըրգնաբար՝ մեղանչէին ·
Բարեաց գործոց հեռանային ,
և ՚ի չարիս՝ըն հըպէին .
Ծերք և մանկունք՝ արք և կանայք ,
յախտըս մեղաց՝ անկեալ կային :
Քահանայքըն՝ քարոզք բանին ,
և սպասաւորք՝ սուրբ խորհրդին ,
Անխըտրաբար՝ վարուք կէին ,
զոր չէ՛ ասել՝ պարտ գործէին ·
Ապա ՚ի սուրբ՝ըն սըրբութեանց ,
անմաքրապէս՝ մերձենային :
Եւ այսպիսի՝ գործովք չարեաց ,
որովք ՚ի նոյն՝ անզեղջ էին .

Զբաբելոնի՝ զբոցն իջուցին ,
զհուրն և զծըծում՝ բըն սողոմին .
Զերկրի բերան՝ անձանց բացին ,
որպէս կորխայ՝ և դաղանին :
Այլ զե ոմանք՝ ընդդէմ բերին , նէ
և աստանաւր՝ հակառակին .
Ասեն զե՛րդ՝ իրաւացի ,
ա՛յս է վըճիռ՝ դատաստանին .
Մի՞թէ միայն՝ մեղան նոքին ,
քան զազգս ամեն՝ քրիստոնէին .
Զի յայսքանեաց՝ բիւր քաղաքաց ,
պատիժ նոքա՝ միայն կրեցին :
Կամ թէ արդար՝ արդեաւք էին ,
յորոց 'ի ձեռ՝սըն մատնէին ,
Զանգի և իւրքն՝ առ հասարակ ,
որ ըզսուսա՝ չարչարեցին :
Բայց լուիցէ՝ ա՛յժմ այնպիսին ,
պատասխանիս՝ իւրում բանին .
Ո՛չ 'ի յինէն՝ բան մարդկային ,
այլ 'ի տեառնէ՝ յոյժ գիտողին .
Որ վասն անկեալ՝ աշտարակին ,
'ի սելովամ՝ տասն և ութին .
Կամ ընդ զոհից՝ գալիլէին ,
զարիւն խառնեալ՝ պիղատոսին :

չխ Մի՞թէ արդեւք՝ ասէ՛ էին ,
մեղաւք միայն՝ լցեալ նոքին ·
Ասեմ թէ ոչ՝ ապաշխարէք ,
լինիք և դուք՝ նըման նոցին :
Արդ ա՛յս ՚ի խրատ՝ է մարդկային ,
հանուրց բոլոր՝ բարեպաշտին ·
Ո՛չ ՚ի հաւատ՝ըն ճշմարիտ ,
ունել միայն՝ վըստահութիւն ,
Այլ և ըզգործս՝ արդարութեան ,
միաբանել՝ ընդ հաւատին ·
Քանզի մեռեալ՝ հաւատք ասին ,
որում և գործք՝ ո՛չ հետեւին :
Ապա թէ ոչ՝ յայս կըրթիցին ,
որ է աւրէնք՝ աստուածային ,
Իւրաքանչիւր՝ ոք առանձին ,
ա՛կնունիցին՝ պատուհասին ·
Կամ ա՛յս կենաւքս՝ որ ՚ի մարմին ,
կամ յանաչառ՝ մեծ ատենին :
Իսկ որ ՚ի ձեռ՝սըն մատնեսցին ,
հաւատացեալք՝ անհաւատին ,
չծ Մի՛ յայս տըգէտ՝ըք լինիցին ,
աստուածական՝ դատաստանին ·
Քանզի որպէս՝ երկրաւորիս ,
ա՛յս է հրահանգ՝ դատաւորին ,

Օֆ սուր ածել՝ մահապարտին ,
կամ պատուհաս՝ չարագործին ,
Ո՛չ հրամայէ՝ մեծ իշխանին ,
կամ սիրելի՝ բարեկամին .
Այլ անարժան՝ մարդոյ վերջին ,
և դառնագոյն՝ դիմաց դահճին :
Ա՛յնպէս և յայս՝ տընաւրինին ,
առ երկնաւոր՝ Թագաւորին :
Որպէս տանջանքն՝ եգիպտոսին ,
չար հրեշտակաւք՝ լինել ասին ·
Կամ կըռապաշտ՝ բարբարոսաւք ,
զազգսըն տանջէր՝ զիսրայէլին :
Կամ առ ՚ի խրատ՝ զարհուրագին ,
դիւաց մատնէ՝ զոմանց մարմին .
Եւ կամ բերում՝ըն կարկըտին ,
և եղեման՝ խըստագունին :
Կամ անձրևաց՝ զա՛լ անբաւին , չկ
կամ անխոնաւ՝ խիստ երաշտին .
Կամ բազմութեամբ՝ յոյժ մարախին ,
կամ դալուկին՝ և ժինային ·
Եւ կամ մըկամբ՝ զազրագունին ,
՚ի յեռացումն՝ անդաստանին :

Սէրդ մի՛ պարծիր՝ ո՛վ անըզգամ,
ժանտ եւ ժըպիրհ՝ չարեաւք փարթամ.
Թէ զաւրաւոր՝ քոյին ձեռամբ,
զի՛ս հընձեցեր՝ դու տարաժամ.
Կամ մահմէտին՝ քո պաշտամամբ
առեր զամուրս՝ անյաղթական.
Եւ մի՛ կարծեր՝ ամբարտաւան,
ըզքեզ հըսկայ՝ եւ յաղթանդամ:
Քանզի նըմա՛ն՝ ես դու մըկան,
որ սատակմամբ՝ պըղծէ ըզթան.
Կամ աղտեղի՝ կո՛յր խըլըրդան,
որ կայ յանլոյս՝ խաւար մըթան.
Որ 'ի ծածուկ՝ ոչ յայտնական,
փորէ՛ զգետին՝ըն քե՛զ նըման:
Կամ զե՛րդ թըրթուր՝ զազրաբերան,
թունաւք դեղէ՝ ըզբուրաստան.
Եւ կամ մարախ՝ յո՛յժ բազմազան,
զհիւթըն ծըծէ՝ զդալարական:
Որ մինչ հրամանն՝ արարչական,
կամի զտանջել՝ըն նոքա զան.
Իսկ 'ի նայել՝ըն քաղցր ակամբ,
դարձեա՛լ ջընջէ՝ զայն սատակմամբ.
Ըզմուկն ըզխըլուր՝դըն միաբան,
ջըրով խեղդէ՝ խո՛ր հեղձական.

Իսկ ըզմարախ՝ըն յոքներամ,
ուտէ՛ հալէ՝ տարմին բերան:
Այսպէս և դու՝ թը՛շուառական,
մընայ չարեաց՝ քեզ 'ի վախճան.
Թէ ինձ եղեր՝ մահու դարան,
գո՛ւբ փորեցեր՝ կորըստական.
Ցաւաւք լըցեր՝ զիս տըխրական,
կենացս եղեր՝ իմ դաւաճան:
Որ զիմ տըղայքս՝ վայելչական,
փաղաղեցեր՝ զերդ ըզգազան.
Եւ նըստուցեր՝ զիս 'ի մըթան, չճ
երբ ըզմեռեալ՝ 'ի գերեզման:
Արդ լո՛ւր և դու՝ փըտեա՛լ գերան,
մերձ 'ի յանկում՝ըն կործանման.
Քանզի ահա՛՝ թուրն ազդական,
սուրըն սըրեալ՝ աստուածական.
Այն որ է բա՛ն՝ըն հայրական,
քան զերկսայրի՝ սո՛ւր հատական,
Պարանոցիդ՝ վերայ շողան,
ըմպել զարիւն՝ըդ մըրմըռան:
Որ ըզբաժակ՝ըն դառնահամ,
ինձ արբուցեր՝ զյիմարական.
Արդ ըզմըրուր՝ըն վերջնական,
արբցես և դու՝ ըզգըլորական:

Որ տարապարտ՝ մարտեար ընդ իս ,
չա՛ր հատուցեր՝ բարւոյն փոխան .
Ընկա՛լ և դու՝ վրիժուց տուգան ,
առցե՛ս 'ի ծոց՝ըդ եւթնական :
Աւա՛ղ լիցին՝ յազգս ամենայն ,
տիպ ւ աւրինակ՝ տոհմի մարդկան .
ՆԴ Որք տեսանենն՝ եղո՛ւկ քեզ տան ,
վա՛յ 'ի վերայ՝ վայի կարդան :
Ա՛յս այր ասեն՝ ամբարտաւան ,
չարա՛ր զա̃ծ՝ իւր աւգնական .
Այլ յուսացաւ՝ յո՛յժ մարմնական ,
'ի մեծութիւն՝ իւր նանրական :
Վասն ա՛յսորիկ՝ ա̃ծ իսպառ ,
կործանեսցէ՝ զքե՛զ յաւիտեան ,
Եւ խլեսցէ՝ զարմատըս քո ,
յերկրէ՛ հանցէ՝ կենդանական :
Զա՛րք ամենայն՝ որք անիծան ,
իսկըզբանէն՝ մինչ 'ի վախճան ,
'Ի վերջապէն՝ որ քե՛զ նըման ,
և 'ի յորդւո՛ցն՝ այն կորըստեան .
Վերա՛յ գայցեն՝ քոյդ գագաթան ,
և զքեզ պատե՛ն՝ որպէս պարան .
Եւ սատանայ՝ դէմ յանդիման ,
կացցէ յաջմէ՝ քեզ աւգնական :

Արդ եղիցես՝ դու հալածեալ,
որպէս փոշի՝ հողմով հոսեալ,
'Ի հրեշտակէ՝ տեառըն նեղեալ, Գ
իբրև ըղձեւս՝ անհե՛մ եղեալ:
Եւ ճանապարհ՝ քո խաւարեալ,
յաջ և յահեակ՝ զքե՛զ պաշարեալ,
Արագապէս՝ փո՛յթ ժամանեալ,
քեզ որոգայթն՝ անգիտացեալ:
Ո՛րսըն զոր ինձ՝ գաղտ թագուցեալ,
առցէ՛ զոտիւք՝ըդ խորտակեալ,
'Ի գո՛ւբ խորին՝ ապականեալ,
ինչցե՛ս դու ան՝դըր կորուսեալ.
Իբր ըղձաղան՝ գետին կըլեալ,
կորխ ւաբիրոն՝ յերկրէ ծածկեալ.
Քանզի քեզ ա՛յն՝ բաժին հասեալ,
արիւնահե՛ղըդ՝ նենգով լըցեալ:
Որով արեւ՝ըդ պակասեալ,
լիցի՛ս տանեաց՝ խոտ ցամաքեալ.
Եւ ժամանակ՝ կենացդ հատեա՛լ,
յորում է յոյս՝ քո հաստատեալ:
Ընդ քեզ և ազգ՝ըդ կորուսեալ,
հագարացւոց՝ լիցի՛ն ջընջեալ.
Որդիք ձեր ո՛րբ՝ կանայք գերեալ, պժ
լիցի՛ն մուրողք՝ և աստանդեալ:

Ելցե՛ն յարկաց՝ըն տարագրեալ,
փոխան խմոց՝ըն տատանեալ·
Օ՛ինչս և ըզգոյս՝ ձեր վաստակեալ,
առցեն աւտա՛րք՝ յափըշտակեալ·
Օ՛որ հատուցէք՝ ինձ չարաչար,
դարձցի՛ 'ի գլուխ՝ ձեր բազմացեալ·
Եւ մի՛ գըտցի՝ ձեզ աւգնական,
կամ ձեր որբոցն՝ ով ողորմեալ:
Արդ եղիջի՛ք՝ դուք տատանեալ,
հանդերձ ծնընդովք՝ յազգէ ջընջեալ·
Զե՛ր յիշատակն, յերկրէ բարձեալ,
'ի մէջ մարդկան՝ ո՛չ յիշեցեալ:
Գո՛րծ զանխծից՝ դու գործեցեր,
վասն այսորիկ՝ զայս սիրեցեր·
Արդ քե՛զ ելցէ՝ կարծիւ աւրեր,
և կայենին՝ հասցէ երեր,
'Ի դառնութիւն՝ դարձցի՛ն տարերք,
ջըրհեղեղին՝ ելցե՛ն գետերք:
Սեա՛ւ ամպ մըթին՝ կարկըտաբեր,
զքեզ արասցէ՝ անպըտղաբեր,
Սոդոմայ հուրն՝ ծըծըմբաբեր,
իջցէ 'ի գլուխդ՝ արիւնակեր:
Քան զփարաւոն՝ զեգիպտացին,
խիստ և վայրագ՝ սըրտիւ եղեր·

Ո՛չ ըզմանկունսն՝ իսրայէլի ,
միայն զարու՝սըն սուզեցեր ·
Այլ հաւասար՝ խողխողեցեր ,
յարեան վըտակ՝սըն խեղդեցեր :
Արդ անդրանիկ՝ զոր սիրեցեր ,
դո՛ւ և քոյին՝ տոհմի որեր ,
՚Ի հրեշտակէն՝ այն մահաբեր ,
սատակեսցին՝ յանլոյս գիշեր :
Զանմեղ զաւինս՝ պատառեցեր ,
ո՛վ դո՛ւ և քո՝ ազգի գայլեր ·
Յաղջամըղջին՝ ևոչ ՚ի կարմիր ,
ծոփս անդընդոց՝ ընկըղմեցեր :
Զամաղեկաւ՝ չարեաւք զանցեր ,
զնորս իսրայէլ՝ չարչարեցեր ·
Իսրայէլին՝ մծ յիսուս, պն
զքեզ արասցէ՝ անմանկաբեր :
Հարցէ զարեւդ՝ ՚ի սուր սուսեր ,
իբր անխընայ՝ զիս դու հարեր ·
Եւ ըզքաղաք՝ըս քո յաւեր ,
զերդ զերեքոյլ՝ըն հիմն ՚ի վեր :
Որ զքանանուն՝ ջընջեաց զազգեր ,
յեւսաւ յերկրէն՝ աւետաբեր ·
Նո՛յն արասցէ՝ տէրն իմ յիսուս ,
զքեզ տարագրեալ՝ և տարաբեր :

Զերդ ըզգողեալթ՝ բըղըշտացին ,
յո՛յժ ու’ի համակ՝ըդ փըքացեր ·
Պի՛ղծ քո դիւաւք՝ նըզովեցեր ,
և պերճալի՝ զքեզ ինձ ցուցեր :
Արդ ’ի դաւթայ՝ ծընեալ մանուկ ,
տէր և որդին՝ խորհըրդաբեր ,
Հարցէ ըզքեզ՝ այդր ’ի ճակատ ,
երեք քարեան՝ յեռանձնաբեր :
Առցէ ըզզէնդ՝ յոր յուսացեր ,
բաշխէ զաւար՝ըն զոր առեր ·
պ̄ս Հատցէ ըզգլուխ՝ քո ’ի սուսեր ,
որպէս և ան՝ դանաւը տեսեր :
Ըռամփսակայ՝ նըմանեցեր ,
զեղջիւրդ ’ի յա՛մ՝պըս համբարձեր ,
Իա՛նս առ բարձրեալ՝ըն խաւսեցար ,
և ’ի յերկինս՝ զբերանդ եդեր ·
Արդ ’ի դըժո՛խս՝ իջցես ’ի խոր ,
քե՛զ անկողին՝ մէջք և ցեցեր ·
Եւ նո՛յն հրեշտակ՝ըն մահաբեր ,
սըրով հատցէ՝ զքե՛զ ’ի յազդեր :
Անտիոքոս՝ երկրորդ եղեր ,
և զիսրայէլ՝ըս զերեցեր ,
Զտո՛ւն յուդայեան՝ յաւար առեր ,
զմակաբայեանք՝ չարչարեցեր :

Արդ հատուցի՛՝ քեզ փոխարէն ,
չարեաց ամեն՝ զոր գործեցեր ·
Տուն քո լիցի՝ անհե՛տ աւեր ,
և դո՛ւ գերի՝ ազգովդ յերեր ·
Տո՛հմ և ազինք՝րդ քո թուրքեր ,
հալածեսցի՛ն՝ յերկրի եղեր :
Ձերովդէի՝ նըման զըտար ,
և ա՛յլ առաւել՝ զերազանցեր ·
Օ մայրըն մանկամբ՝ դո՛ւ ըսպաներ ,
զկա՛թն ընդ արեան՝ըն խառնեցեր :
Արդ զի դու յիս՝ ո՛չ խնայեցեր ,
և ողորմութեամբ՝ ո՛չ ներեցեր ·
Եւ քեզ յաւուր՝ըն չարութեան ,
մինչ տագնապիս՝ սարսըռաբեր ,
Մի՛ գըթասցի՝ աջ արարչին ,
և ո՛չ խնայեսցի՝ ողորմաբեր ·
Այլ 'ի մաւտո՛յ՝ մերձ 'ի յաւրեր ,
հեղո՛ւ զմըրթերն՝ յոր զանձեցեր ·
Յաւուր վրիժուց՝ըն հատուցման ,
մինչ հարկանի՝ ոտն ըզքարեր :
Քանզի իսպա՛ռ՝ բարկացուցեր ,
զքաղցր և զբարին՝ դառնացուցեր ·
Ահա՛ մերձեալ՝ աւր կորըստեան ,
քո ժամանակ՝ թըշուառաբեր ·

Զի է հասեալ պատրաստաբեր ,
ո՜ր ՚ի վերայ՝ քո՜ վրիժաբեր :
պէ Այն որ գոչէ՝ աստուածաբար ,
ւ ինքըն յայտնէ՝ մարդկան ՚ի վեր .
Զա՜ջն արձակէ՝ վրէժխնդիր ,
զսո՜ւրըն սրբէ՝ փայլակնաբեր ,
Արբուցանէ՝ զնետս իւր յարեանդ ,
և կերիցէ՝ զմիս քո սուսեր .
Մինչև ասցէ՝ բազմապատիկ ,
զվրէժ արեանն՝ իմ զոր հեղեր :
Ա՛յս յառաւրեայս՝ և յանցաւորս ,
յորում ունիս՝ փոքր ինչ աւրեր .
Յոր հո՜ւպ եղեալ՝ է քեզ տապար ,
և հատանէ՝ որպէս ծառեր :
Բայց զի՞նչ լինիս՝ ո՜վ եղկելի ,
յայն ահագին՝ աւրն յահաբեր ,
Որ սպանելոցն՝ է կենսաբեր ,
և քեզ կրկի՞ն՝ նա մահաբեր :
Նոքա՜ թռչին՝ ամպովքն ՚ի վեր ,
՚ի հրեշտակաց՝ խառնին դասեր .
Իսկ դո՜ւ կործիս՝ անդր աւրնթեր ,
քո՜ մահմէտովդ՝ յոր յուսացեր :
պհ Դիւաց խառնիս՝ դու ՚ի գընդեր ,
զորոց ըզկամ՝սըն գործեցեր .

Նոցա՛ դրախտին՝ բանին փակեր ,
երկնից դըրուն՝քըն լուսաբեր ·
Քե՛զ դըժոխոց՝ բացեալ բերան ,
և տարտարոս՝քըն ցըրտաբեր :
'Ի հուրըն անշէջ՝ կիզողական ,
անքո՛ւն որդան՝ցըն լինիս կեր ·
Խաւարըն անլոյս՝ ւանաւսրաբեր ,
Թա՛նձր և մըլթին՝ զերդ գոյն կըպեր ·
Որ է նա հուր՝ խաւարակերպ ,
չունի՛ ճաճանչ՝ ինչ լուսաբեր ·
Այլ Թանձրամած՝ շաւշափելի ,
մինչ մաւտ անլոյս՝ է յայս գիշեր :
Այրէ՛ խստաւ՝ բայց ոչ ծախէ ,
անհա՛տ պահէ՝ միշտ 'ի յերեր ·
Ո՛չ ըղձագար՝ ա՛մ կամ զերկու ,
ո՛չ ըղձարիւր՝ հազար բիւրեր ·
Այլ անվախճա՛ն՝ է և աներբ ,
և յաւիտեան՝ անպարաբեր ·
Յոր անկանիք՝ դուք անդանաւր ,
այրէք որպէս՝ հոսեալ յարդեր ·
Կամ զորոմանն՝ ընտրեալ բուսեր ,
'ի հրեշտակաց՝ կապեալ խըրձեր :
Յայնժամ լըցցի՝ բանն ասացեալ ,
մարգարէին՝ դաւթայ երգեր ·

Ուրա՛խ լցին՝ արդարք 'ի տէր ,
մինչ հատուցման՝ լինին դատեր ·
Զի 'ի յարեան՝ մեղաւորին ,
լուասցեն ըզձեռս՝ որպէս յաղբեր ,
Եւ ասասցէ՝ մարդ արդարեւ ,
գուցէ՛ ա՜ծ՝ իրաւաբեր ·
Առնէ՛ բարիս՝ որք են բարիք ,
տացէ՛ չարացն՝ անբաւ չարեր :

~~~~~~~~~~

Բայց դուք որդի՛ք՝ իմ սիրելիք ,
չէ՛ք ինձ մեռեալ՝ այլ կենդանիք ·
Քանզի յերկրի՝ նահատակեալք ,
և 'ի յերկի՝նըս պըսակիք :
Յաչըս մարդկան՝ մեռեալ կարծիք ,
և 'ի յայժմուս՝ ողորմելիք ·
պՂ Այլ յաստուծոյ՝ ձեռին լինիք ,
և կենդանի՝ յուսով պահիք :
'Ի հրեշտակաց՝ այժմ երանիք ,
և յանմարմնոց՝ դասըն կարգիք :
Զմահկանացու՝ մարմինս լուծիք ,
և զհողեղէն՝ տունս քակեցիք ,
Այլ գեղեցիկ՝ և հրաշալի ,
անձեռագործ՝ շինուած ունիք ·
~~~~~~~~~~

Որոյ շինող՝ ճարտարապետ,
այն որ կամար՝ կապեաց զերկինք :
'Ի ձմերայնի՝ վաստակեցիք,
յանձրեւաբերս՝ սերմանեցիք,
Զցորեանն 'ի հող՝ըն թաղեցիք,
յորում նեխեալ՝ անդ լուծանիք:
Եղեմնապատ՝ սառամբ լինիք,
և ձիւնաթաղ՝ ամբողջ պահիք ·
Մինչ 'ի գարունն՝ հողով ծածկիք,
ամեթացեալ՝ պարարտասջիք :
Ցորժամ կենաց՝ ցաւղոյն արբջիք,
վաղվաղակի՝ բուսանիջիք,
Որոտ ընդ ոստ՝ վերաբերիք, .Գ.
յանկարծակի՝ վեր երեւիք :
Որպէս ծաղիկ՝ բողբոջեցիք,
սաղարթագեղ՝ պաճուճիցիք ·
Ծառոյն կենաց՝ մերձեալ հըպիք,
'ի մահացուէն՝ այլ ոչ խաբիք ·
Բազմաբեղուն՝ ստեղն արձակիք,
մինչ 'ի յերկի՝նըս հասանիք :
Որք արտասուաւք՝ըն ցանեցիք,
յորժամ աստի՝ անդր երթայիք ·
Խընդմայք ցընծայք՝ գուարճալիք,
զաւրայն 'ի դիրկս՝ առեալ հըրճուիք :

Աշխատեցայք՝ իբրև մշակք,
և 'ի տապ տաւթոյ՝ սաստ քրտնեցիք.
Յորժամ հնձէք՝ զոր ցանեցիք,
յանմահական՝ դրախտին հանգչի՛ք:
Ընդ զովարար՝ տնկոյն նստիք,
և յաղբերցն՝ կենաց արբջի՛ք:
Որ չարչարեա՛ցն՝ ընդ ձեզ լացցէ՛,
դո՛ւք խնդալից՝ սրտիւք բերկրիք.
ջժ 'Ի բոց հնոցին՝ նա՛ կիզանի,
դուք 'ի վտակն՝ աղին շրջիք.
'Ի ձէնջ հայցէ՝ լեզուին ջրիկ,
դուք ո՛չ տայցէք՝ նմին կաթիկ:
Նա 'ի բերան՝ բելիարա՛յ,
զոր խորտակէ՝ նորին ժանիք.
Եւ բնակութեան՝ իւրոյ տեղիք,
է դժոխոցն՝ յատակ ներքինք:
Իսկ ձեզ է զոգն՝ աբրահամեան,
ուր ղազարոսն՝ ուխր նմանիք.
Յորոց միջի՝ վիհ անհնարինք,
և անդրադարձ՝ բնաւին չի՛ք:
Դուք 'ի ձեռաց՝ տեառն տանջեալք,
զպարտս մեղաց՝ կրկին առիք.
Օտրգեղ պատկեր՝ չարեացն եղծիք,
զոր 'ի մարմնի՝ սաստ ունէիք.

Զամաւթ բնութեան՝ըս մերկացիք ,
զաղտեղութիւն՝ արեամբ լուացիք :
Ա՛րդ քան ըզձիւն՝ սպիտա՛կ լինիք ,
և քան ըզկաթ՝ըն մածանիք ·
Անձա՛ռ լուսով՝ լուսաւորիք ,
և թագ ՚ի գլուխ՝ պըսակեսջի՛ք :
Զայս նեղութիւնս՝ անդ ո՛չ յիշէք ,
զոր ՚ի մարմնի՝ աստ տեւեցիք ·
Ըզ չարչարան՝սըն մոռասջիք ,
և ՚ի մահուանէ՝ այլ չերկընջիք :
Թէ և մեռայք՝ այժմ ՚ի մարմնի ,
կեանք առ քո՛՝ ծածկեալ ունիք ,
Յորժամ ծագէ՝ յարեւելից ,
դուք ընդ նըմա՝ փառաւք յայտնիք ·
Յաջակողմեան՝ նորա դասիք ,
ընդ վըկայից՝ըն պըսակիք ·
՚Ի գոյն արեան՝ կարմիր փայլիք ,
զոր ինքնակամ՝ ձերով հեղիք :
Ա՛րք ընդ արանց՝ սըրբոց բազմիք ,
կանայքդ ՚ի դաս՝ կուսից կարգիք ·
Անմեղ մանկունք՝ տըղայք սիրունք ,
՚ի հրեշտակաց՝ գունդըն խառնիք :
Իբրև փեսայ՝ թագիւ պըճնիք ,
և որպէս հարս՝ըն զարդարիք ,

Ա՛նձառ փառաւք՝ լուսաւորեք,
բազմանըկար՝ գոյն պաճուճեք:
Ա՛րեգական՝ նըման ծագեք,
յարքայութեան՝ երկնից փայլեք·
Ընդ անմարմնոց՝ դասըս խառնեք,
յիմանալեաց՝ըն բերկրեսջիք·
Մի՛շտ երգակից՝ նոցին լինեք,
՚ի լոյս փառաց՝ տեառըն բնակեք:

Արդ կենդանեաց՝ դա՛սք հաւասար,
բանքս այս լեցին՝ ձե՛զ մըխիթար·
Որ էք ՚ի լաց՝ դուք անդադար,
նըստիք ՚ի սուգ՝ ու՚ի տան խաւար·
Վասն իմ հընձոց՝ըն տարաժամ,
կանաչ բուսոց՝ խորշակահար:
Եւ թէ ցրուած՝ կայք ՚ի յաշխար,
ու՚ի գերութիւն՝ յերկիր աւտար·
Եթէ ՚ի սրոյն՝ յայն մահարար,
մնացեալ մա՛ռ իս՝ էք յուսաբար·
Եւ թէ յայլուստ՝ ոք բարերար,
յիս մերձեցայք՝ վըշտակցաբար·
Կացէք յոտաց՝ զուարճաբար,
զուգըդ լուծէք՝ ըզվըշտարար·

Հանէ՛ք զըզգեստ՝ըդ տըխրաբար ,
զգեցէ՛ք պայծառ՝ ուրախաբար ·
Մի՛ տըրտմիցի՛ք՝ այլազգաբար ,
զերդ հեթանոս՝ կամ հրէաբար :
Մի՛ 'ի յերկիր՝ հայի՛ք 'ի չար ,
և զայս կենացս՝ ասէք վըշտար ·
Մի՛ յաւուրեայս՝ անասնաբար ,
դընէք ըզյոյս՝ իբր անհանձար :
Մի՛ զփափկութիւն՝ըս մահաբար ,
ասէք անձին՝ կենդանաբար ·
Մի՛ զմեծութիւն՝ կորըստաբար ,
համեմատէք՝ կենացն անձառ .
Մի՛ զցանկութեան՝ ախտ հեշտաբար ,
համարեցէ՛ք՝ զուարթաբար ·
Մի՛ որք մեռանն՝ սուտ չարաչար ,
լա՛յք և ողբայք՝ անյուսաբար :
Քանզի ունիմ՛ք՝ տէ՛ր բարերար ,
որ ըրժըշկէ՝ զմեզ տիրաբար :
Թէպէտ հարու՝ ոչ սաստկաբար ,
այլ հայրաւրէն՝ և զըթաբար ·
Քանզի սփոփէ՝ զմեզ սիրաբար ,
և ո՛չ բարկանայ՝ նա մեզ իսպառ :
Ո՛չ ըստ մեղաց՝ մերոց արար ,
ո՛չ ըստ չարեացն՝ ածէ վըշտար ·

Այլ ըստ երկնի՝ցըն բարձրութեան,
զողորմութիւն՝ իւր բա՛րձր արար ·
Եւ ընթացիւք՝ արեգական,
հեռի՛ ՚ի մէնջ՝ ըզմեղս արար :
Զի անհնարինքն՝ է նմա հընար,
անկարելի՝ քըն դիւր և կար :
Ահա սակա՛ւ՝ ինչ ժամանակ,
փոխէ զպըղտոր՝ ջուրն ՚ի յըստակ ·
Եւ տա՛յ ըմպել՝ դառնաճաշակ,
ա՛յնմ որ արբոյց՝ ինձ դըժընդակ ·
Զվերջին մըրու՝րըն կապուտակ,
արբուցանէ՝ նըմի՛ն բաժակ ·
Իսկ ինձ պայծառ՝ և քաղցրունակ,
զանմահարարն՝ ըմպել վըտակ :
ջկ̃ Ո՛չ թէ իմոյն՝ միայն զխմակ,
զոր ինչ հատոյց՝ ինձ ձախողակ,
Այլ և եւթնից՝ըս չափ կըրկնակ,
դարձցէ՛ ՚ի ծոց՝ իւր հակառակ :
Իսկ ըզ կապեալս՝ որ է ՚ի փակ,
արձակեսցէ՝ տ̃ր յընդարձակ ·
Եւ զգերութիւն՝ իմ վըտարակ,
դարձուցանէ՝ այսրէն ՚ի յարկ ·
Մատնէ՛ զգերիչս՝ իմ ՚ի յապտակ,
սուր և ՚ի զընդան՝ ձե՛ռ փոխանակ :

Շարժէ կըրկին՝ զազգըն Փըռանկ,
անհուն հեծեալ՝ և հետևակ ․
Իբր ըզծովու՝ ալեաց կուտակ,
բորբոքելով՝ զան խիստ և բարկ ․
Ափա՛ն գետոյ՝ ուղին գունակ,
կամ՛ զէրդ աստեղք՝ երկնից ՚ի կարգ ․
Լընուն զամեն՝ երկրի յատակ,
որպէս ըզձիւն՝ ասրաքատակ ․
Հընչեն զերդ հող՝ մըն հիւսխա՛կ,
զա՛մպըն վարեն՝ ըզհակառակ ․
Մաքրեն զաշխար՝ հըս բովանդակ,
յանհաւատից՝ առնեն զատարկ ․
Զմահմետական՝ ազգ հասարակ,
առնո՛ւն յաւար՝ և յասպատակ ։
Գերեն զխորին՝ ըն խորասան,
և զբաբելոն՝ դա՛ռն աւերակ ․
Եւ զանապա՝ տըն դիւաբնակ,
զմաքքա՛ քակեն՝ հիմն ՚ի յատակ ․
Զայն որ յամեն՝ բարեաց դատարկ,
յաստուածայի՛ն՝ ջըրոյն ցամաք ․
Յորում ըզդեւ՝ սըն հալածակ,
ա՛նդր առաքէր՝ տըն հեռարձակ ։
Զքա՛րըն զըլլեն՝ ըզսեւորակ,
ձըգեն կարմիր՝ ծովուն յատակ ․

Որպէս առիւծ՝ ընդ նապաստակ,
զհետ մրտանեն՝ նոցա երագ.
Կամ զերդ առիւծ՝ գոչէ առակ,
փախչին էրէքն՝ ան հակառակ:
Այսպէս ջընջին՝ նոքա իսպառ,
'ի սուր սուսեր՝ 'ի տէգ նիզակ.
Եւ զա՛յլըն ամենեն՝ փախըստական,
վարեն յայն կոյս՝ մինչ անբընակ.
Անուն ծառայս՝ և աղախնայս,
զկանայս նոցա՝ և ըզ զաւակ:
Տիրեն ամեն՝ երկրի ծագաց,
և ընդ հանուր՝ կողմ աշխարհաց.
Քրիստոնէից՝ հանուրց ազգաց,
փրկի՛չ լինին՝ յանաւըրինաց:
Յեկեղեցիս՝ըն խաւարած,
յայնժամ՝ վառի՝ լոյս կանթեղաց.
Եւ որ ծառայքն՝ էին չարաց,
խառնին 'ի գուն՝դըն մեծատանց:
Գա՛ն ժողովին՝ յամեն կողմանց,
ուր հալածեալ՝ են և ցրուած.
Շինին աշխարհ՝ քրիստոնէայց,
անչափ անբաւ՝ բարեաւք լըցած.
Լինի առատ՝ պըտուղ բազմաց,
սերմանց ւամեն՝ պըտղաբերաց:

Մորդիք ցընծան՝ զուարճացած ,
յուտել յըմպել՝ըն պարարած .
Որք վա՛յ ասեն՝ վաղ մեռելոց ,
եղուկ կարդան՝ գերեզմանաց .
Թէ է՞ր չհասիք՝ յաւըրս կենաց ,
յանդիւտ բարիս՝ հասարակաց .
Օր պարգեւեաց՝ հայրըն փառաց ,
մեզ 'ի վերջին՝ ժամանակաց :
Յայնժամ որդիքդ՝ իմ հեռացած ,
որք այժմ՛ յինէն՝ էք բաժանած ,
Գա՛յք 'ի վերայ՝ բարձեալ կառաց ,
պալարակապ՝ երիվարաց .
Ուր ցրուեցայք՝ յամեն կողմանց ,
չորեքծագեան՝ տիեզերաց .
'Ի գաւառաց՝ հեթանոսաց ,
և յաշխարհաց՝ պարսից թուրքաց :
Ե՛ս համբառնամ՝ զաչս 'ի բարձանց ,
զձե՛զ տեսանեմ՝ շուրջ ժողոված .
Ընդ որ խընդամ՝ և ցընծացած ,
զիրկս արկանեմ՝ և զուարճացած :
Եւ զտըխրական՝ զգեստ մերկացայց ,
կարմիր կանաչ՝ գոյն ըզգեցայց :
Եւ զպատմուճա՝նըս պատառած , Ու
փոփոխեցից՝ նորոգ կարած .

Ո՛չ յերկրաւոր՝ ոստայնանկած ,
այլ ՚ի վերուստ՝ըն փորանկած :
Եւ զառագաստն՝ իմ՛ նըկարած ,
յոսկեթել՝ պաճուճանաց ,
Դարձեալ պարզեմ՝ պայծառացած ,
՚ի հարսնարանն՝ իմ՛ զարդարած :
Անդ ՚ի ներքոյ՝ վարագուրաց ,
սուրբ քահանայք՝ խորհըրդազգեաց ·
Աստուածայնոյ՝ նուիրանաց ,
զո՛ւ պարգեւիչ ՝ պատարագաց :
Ա՛նդ մակաղէք՝ հաւտք ոչխարաց ,
դասըք անմեղք՝ և սուրբ գառանց ·
Ըմպէք զարիւն՝ պատճառ կենաց ,
ուտէք զերկնից՝ իջեալըն հաց .
Բնակէք ՚ի վայ՝րըս դալարաց ,
սնանիք առ ջու՝րըս հանդըստաց ,
Յանմահական՝ սուրբ աղբերաց ,
և ՚ի յամպոցն՝ երկնատեղաց .
ռժ Յառաջելոց՝ մարդարէից ,
՚ի սուրբ բանից՝ վարդապետաց :
Պարակցելոց՝ երկնաւորաց ,
ձայնիւ հընչէք՝ ընդ հրեշտակաց ,
Օերեք սըրբեան՝ըն սրովբէից ,
երրորդութեանն՝ երգս ՚ի բարձանց :

Ա՛րդ այսպիսի՝ պայծառ փառաց,
ա́կընկալէք՝ յուսով կենաց.
Զի փառք նախնին՝ իմ տաճարաց,
քա́ն ըզվերջին՝ըն լինի ցա́ծ.
Եւ սա́ անցեալ՝ անդր ՚ի բարձանց,
քա́ն զառաջին՝ըն գերազանց:
Բայց այս խընդման՝ բա́ն աւետեաց,
ո՛չ միայն իմս՝ է խորանաց.
Այլ բոլորից՝ բարեպաշտաց,
եկեղեցեաց՝ հանրականաց:
Զոր ընթերցեալ՝ ՚ի սուրբ տառից,
նախագուշակ՝ տեսանողաց,
Տա́մ աւետիք՝ տիեզերաց,
յուսով սպասել՝ այսըր կենաց.
Եւ յառաւօրեայս՝ չարչարանաց, ու́ի
տեւել տոկալ՝ տըրտմականաց:
Զի չէ́ ամով՝ այս լինելոց,
ո՛չ առ յապա́յս՝ կատարելոց,
Այլ փութապէս՝ վըճարելոց,
արագ արագ՝ վախճանելոց:
Զի ե́կն եհաս՝ աւուրց մերոց,
զոր ասացին՝ ամաց թուոց.
Եւ ՚ի տուեալ՝ նըշանս գըրոց,
տեսայք մտաւք՝ թէ է գալոց:

Ա՛ռ զայս տուաք՝ բան սակաւուց,
ձեզ մըխիթար՝ տըրտմեցելոց.
Յերկրաւորաց՝ ու՛չ յերկնայնոց,
յուսա՛լ սպասել՝ որ լինելոց:
Զի զայն հըրնար՝ չէ՛ ասելոց,
և ո՛չ մարդոյ՝ բան խաւսելոց.
Ո՛չ հողեղէն՝ տեսանելեաց,
և ո՛չ ունկամբ՝ լուր լսելեաց.
Որ չէ՛ 'ի միտս՝ անկեալ մարդոց,
զոր պատրաստեաց՝ տ̃ր իւր սըրբոց:
ու̃Է Որո՛վ թէ դուք՝ համբերեցէք,
չարչարանա՝ ցըռ հասելոց.
Զարքայութիւն՝ տ̃ն ընտրելոց,
էք ընդ նոսին՝ ժառանգելոց:
Յորում՛ տեղւոջ՝ տեսանիցէք,
ըզխըրելեացն՝ անձինն 'ի լոյս.
Զոր այժմ ողբայք՝ լալով անյոյս,
անդէ՛ն ցընծայք՝ տեսլեամբ սրբոց.
Ա՛նդր 'ի դըրախտն՝ էք մըտելոց,
'ի միասին՝ վարձանալոց,
'Ի հայրենին՝ զոր կորուսաք,
յանմահական՝ կեանքն երկնայնոց:

Յորոց հայցեմ՝ անդ լինելոց,
և զիս յիշել՝ տարտամ յոգւոց.
Զլո՛կ համանուն՝ մեծի հայոց,
զՆերսէս բացեալ՝ բարեաց գործոց.
Եւ շառաւիղ՝ նորին ոստոց,
բայց ո՛չ նման՝ գոլ արմատոց:
Զողբերգական՝ բանիս գրող,
առ 'ի սփոփա՝նըս տրտմելոց.
Քեզ և բոլոր՝ մարդկան այլոց, ուխ
որք են 'ի սուգ՝ վասըն նոցունց:
Քանզի բանիւ՝ զիրս եղելոց,
մեր ժամանակ՝ըս դիպելոց,
Որով տուաք՝ ո՛չ թէ գիտնոց,
այլ տըխմարաց՝ և տղայոց:
Զոր պահանջեաց՝ տարփմամբ սիրոյ,
եղբաւրորդին՝ իմ ըստ մարմնոյ.
Մանուկ տղայ՝ գոլով տիոց,
և կատարեալ՝ յիմաստ ոգւոց.
Ներհըմտացեալ՝ յարհեստ զինուց,
ըստ հրահանգին՝ հոռվմայեցւոց,
Գո՛լ յաջողակ՝ 'ի նուս ձիոց,
որպէս աւրէն՝ է վարժելոց:

Անուն նախնեացն՝ յորջորջելոց ,
է Ապիրատ՝ մակձայնելոց :
Զոր արարաք՝ խրախճանելոց ,
եբր ըղձաւսա՛նըս հըրճուելոց :

~~~~~~~~

Արդ ա՛ռընկա՛լ՝ բան դուզնաքեայ ,
և վերծանեա՛՝ ըստ իմաստնոց .
ռծ Ո՛չ առաւել՝ և ո՛չ նուազ ,
այլ ՚ի յոտին՝ բերեալ չափոց :
Յոր վայելեա՛՝ սիրով սոցունց ,
լըրմամբ տառիս՝ քո խընդրելոց .
Զոր ստանաւր՝ եմ յանգելոց ,
գիրըս բանիս՝ վըճարելոց .
՚Ի փառըս Հաւր՝ աւարտելոց ,
և Որդւոյ Հոգւոյն՝ կատարելոց :

## ՎԱԽՃԱՆ :
~~~~~~~~

’Ի բաղդատութենէ երից օրինակաց՝ ըզ-
պատշաճագոյնն ընտրելով ’ի բնաբանիս,
զ’ի բաց թողեալ տարբերութիւնս նշա-
նակեմք աստէն իւրաքանչիւր յանուանէ.
վասն զաղափարին Եզնկայ՝ եղեալ տառս՝
ե. Կիլիկիոյ՝ կ. և Փարիզու՝ փ:

Փ. ’Իսկիզբն անդ յաւելեալ ունի զայս վերնագիր. "Երգըս ոգեալ տն̃ ներսէսի, և սրբազան կաթողիկոսի, եղբօր սբ̃յն գրի-գորիսի, հայոց մեծաց հայրապետի": Կ. բան բարաւնական: Ե. տողս չափեալ: կ և փ. խօսեալ բանիւ: կ. և իննսուն ընդ երեքկի: փ. օր շաբաթի:

Փ. Ողբացէք եկեղեցիք... հարք և Ա.
եղբարք և սիրելիք.. քաղաքք և գեղք: կ. կերպից՝ըն նմանի... ադենայի..աւ ’ի ձեզ քառորդ վտակ.. գետ հոլովի: փ. ըղխման բանի:

Փ. Աղերսաբար ըղխեալ յերկ": կ. Ժ
հօր միածնի..ամենի..քանզի նախկին.. որդի ընդ հօր: փ. զտո̃րն ’ի խաչին.. այժմ՝ եմ ’ի հաւտի, երկրպագեմ: կ. բայց զու լսեա́ ո́վ սիրելի:

Փ. Զուոմ մայրաքաղաք.. մեծի ա- Ի
թո": ե. և փ. եկեղեցիքդ ան": կ. բաղմ-աստեղեան... բանըդ խաւսիմ: փ. հա-

սեաւ ընդ ղուկ″... վիճակաւթուրդ մա-
թէի.. իմ այս վայրի.. լաւ ընդ լացողս :

Լ Փ. 'Ի կապելոյս 'ի տան.. ինձ գերողի..
սկիզբն յասխայի : կ. մաքրագունի :

Խ Ն. Բայց դու թողեր : փ. զիս յամայի :
կ. մարդ անապական : փ. զզօրութիքդ..
իմոյ նեղչի : կ. աղէքսանտրը ցանկալի :

Ծ Կ. Հրեշտակք երամք : ե և փ. չիմն
և աւարտ ուղղա″ : փ. տարամերժեալ
հերձ″ : կ և փ. ողբակցելով ինձ յայս
վայրի :

Կ Փ. Մատուցանել տն առաջի : կ. 'ի
տեսանել 'ի մեզ բարի : փ. է տեսանել
մեզ ըզ բարի.. հաճոյասցիս :

Հ Կ. Ընդէր չհասնիս : փ. լա՛ց ընդ լա-
լիս յամենայնի, վ̃ իմ իջո՛ ջուր վըտակի :
արդ 'ի ստորին :

Ձ Կ. 'Ի յաբգարէ թաղաւորի... և շա-
ռաւիղ գաւա″.. լուսաւորչին այնմ : փ.
կայթեաց շո″ : կ. ստորինս երկրի :

Ղ Կ. Ազգ երկրածնի : փ. յանապատն էիր
վայրի, ուէիր նման... որդիս ծնար յաւա-
գանի : կ. շատ է ծովի :

Ճ Կ. Թագ'ըն քո զարդի : փ. որ է զար-
դար' անք դշխոյի : կ և փ. ո՛ւր պատմու-
ճան հարսնարանի, կամ' ոսկեհուռ : փ.
ու.ր չէ փես″ : կ. զեր'գըն դաւթի.. ոչ
հարկանի, զփողըն հնչող : փ. զփողըն
հնչէն : կ. պարարակ զենամոլին.. ոչ զե-
նանի :

Կ. Զուարճակից ։ փ. զուարճացին ։ ԽԺ
ե և փ. որդւոյ անառակին ։ կ. հայրենի..
մեղաւորի.. ընթերցողքն՝ են մ̆բ.. կամ՛
վարդապետք ։ փ. ո̂ւր մ̆բ խորհուրդն՝ ՚ի
սպասու, կամ՛ պաշ″ ։ ե. գահոյք թագա_
ւորաց ։ կ. Նախարարքն ո̂ւր արքայի ։ փ.
յարարատեան՝ ըն գաւա″ ։
Ե. Ո՛ւր են վերջի ։ փ. յոյժ հեռաւոր՝ ԽԻ
որ չէ″ ։ կ. անուրջք երազ... վասն որոյ
գքեզ իսկ կո″. լինել սգակից ։
Փ. Կամ՛ քաջ տեղ″ ։ կ. տուն արքայի ։ ԽԼ
փ. յազգէն սերեալ.. տառով բերի ։
Ե. Գողով ըն լի ։ փ. դստերքըդ քո ։ ԽԽ
ե. կալով ՚ի մէջ իւր հրա″ ։ կ. որդիքըն
սփոփի.. դասուց՝ ըն հրեշտակի ։ փ. այն
որ հանգոյն և հաւասար ։
Կ. Պատշաճաւորն ՚ի տաճարի ։ փ. զոր ԽԾ
թէ ասել՝ ըն հարկ լինի ։ կ և փ. յորոց է
ոչ՝ մի ՚ի միջի ։ փ. ընդ երագի... ըգյոր_
դութիւն՝ յորդ վտակի.. պղպղճակի ։ կ.
սուր անող″ ։ փ. ոչ է յագեալ ։
Փ. Այն նա եհաս.. անդաստանի ։ կ. ԽԿ
կանաչ խընծան՝ ւոր ՚ի հասկի ։ փ. կա_
նանչաւոր ՚ի հասակի ։ ե. ջրոց հեղեղի ։
կ և փ. անթաղ մեռեալ՝ դէշ ։ փ. քա_
հանայից քրիստոնէի.. սարկաւագաց քր_
րիստոնէից.. և այլ բազումք ։ կ. որ քեզ
հասին յայսմ վայրի.. մասունք սրբի ։
Փ. Վը̆ այսորիկ ո՛վ եղկելի.. այս ամե_ ԽՀ
նի ։ կ. ՚ի քոյդ յայնժամ... քաջանման

յոյժ տեսանի, իմըս քոյինդ : փ. կակա-
նալը.. ոգի.. աղէտ՝ըս ցաւալը : ե. այսմ
աղետի :

ճձ Կ և փ. Որ են հանուր մարդ″ : փ. ըդ-
յարևելս արևմտօք : կ. առ որ դո″.. թէ
ազգ... յաւագաստի : կ և փ. ծերք և
ամեն՝ չափ : ե. և թագաւորք : փ. սար-
կաւագունք.. հանուր կղերիկ″ :

ճղ Փ. Սրովբէից.. զոր ողբակից : կ. յոր-
դոց իմոց կատարածի... փետտեմ : փ.
իմ ապտակի :

Մ Կ. ՚Ի տան մթին : փ. օրէն սրգաւո-
րի.. կարմիր զգեստի, սև զգենում՝ զոյն
տրխրալը.. զարտօսր : կ. է ՚ի տեղի : ե.
զայն ասեմ՝ զոր վայելը :

մժ Կ և փ. Մայրաբար դիեցուցի.. գեղեց-
կապէս յարընեցի : փ. քան ըղջերկեր :
կ. կաթին՝ որ բըխէի.. որպէս թուի : փ.
զուարթածաղիկ բոյսս յօրի″ :

մե Կ. Գետոց նման՝ վտակ հոսէր, զբու-
րաստանս արբուցանէր : կ և փ. և զհրա-
պարակսն զար″ : կ. բազմադիմի տունկ..
ծառօք ծաղ″.. առաւօտուն.. յերկրի
նայէր :

մլ Փ. Ոք երկրածին՝ որ սերմանէր : կ.
ւայնու զորդիս իմ : փ. թէ չեն նմանա″:
կ. այս քաղաքաց՝ որ :

մխ Փ. Պարիսպ եղեալ՝ լայն.. գլուխ՝ըն
դիտաւոր : կ և փ. իմ շքեղաւոր : կ.
յարկ և փո″ : կ և փ. բայց ըղխորանսըն :

կ · է նմանա″ : փ · վերնագունոյն հան″ :

Փ · Այդպէս կայի · · մայր որդւոյ : կ · մծ
զընև կացին : փ · վարդից՝ նմանաւոր : կ ·
կամ գերրունակ ճրղած · · տաշտաւոր · ·
տունկս որ է կորդ : փ · տունկ որ երկրոդ :
ե · աւանդ պատեալ : փ · աւաք պատեալ · ·
կայի միջի հանդի″ : · · · այս բարեքն · ·
զոր ՚ի յանցեալ դարուն սկսեալ :

Կ · Բաց ՚ի հասեալ : փ · մեր թշնա_ մկ
մեաց դասքըն խն″ · · · ոտից եղան · · ծր-
նունդք որդիք ազ″ · · վերայ ելան :

Փ · Կամ ինչ իրաց : կ և փ · թէպէտ մչ
և յոյժ՝ անհնարական , է զբովանդակն՝ա_
սել մեզ բան : փ · սակայն փոքրիկ՝ մի բա_
ւական , յայտնեմ զաղէտն՝ որ դիպեցան :
կ և փ · քանզի այգւոյն՝ զիս պահապան , եդ
որ ստեղծեաց՝ զիս իսկզբան : փ · տեսեալ
զփառս · · հանին յերկիր : կ · աստի բու_
սան :

Կ · Արարչական : փ · հան ՚ի վերուստ մձ
տեղ հանգստեան · · · աղտեղեցայ · · վրան
եղայ · · · ես ինձ դաւթայ :

Փ · Լինել յազգին · · ապա զաւարսըն մղ
պարազայ · · և քանդէին : կ · թողին զնա :
փ · զօրս ՚ի յուժոյն պակա″ · · · և դեղացոյց՝
իմ ոչ գտայ :

Փ · Նա և յատակըս մօտեցայ : ե · այն Յ
նենգաւոր : կ · գայլ ՚ի մայրին : փ · զանկ
՚ի չարեաց՝ գործունէին · · յորում տեսին :
կ · յորժամ ետես :

յժ Կ. Արխրականին: Փ. շունքըն գի_
նև՝ պատեալ կայլին... վառեալ կայլին.
գըրաշաւորք՝ մըկըրտաւորք, ձոշուք պա_
տեալ՝ բոլոր յանձին. Թուրաւորք ւաղեղ-
նաւորք.. խոցոցէին.. մեքենայլին: Կ.
յաղթել քաջաց՝ըն հըսկայլին:

յի Փ. Հնար մըտին.. սիւն և նե″.. օրէնն
էր.. բարբառք արձակեյին.. մի՛ յամա_
ռել՝ ընդդէմ նոցին.. քաջքն և արիքն:
Կ. ոչ յերկուալ:

յլ Փ. Ո՛չ հաւատալ՝ բա″.. մեռանէին.
քանզի սրտել: Կ. մակաբէանց: Կ և Փ. ազգ
երկրածին: Փ. բարեաց աստէն՝ ունիմք
բազումք ՚ի հանդիսէն:

յխ Կ. Այժմըն գովլին.. փոքր ինչ է վիշ-
տըն: Փ. անբաւ բարիք՝ պարգև առին..
մեր վկայլին: Կ. որք միանգամ ընթանա″:
Փ. մի՛ նմանեսցուք:

յծ Փ. Չէ ՚ի ցեղէն հողե″.. զոյս մեր ՚ի
մարդ: Կ. յաղթականին.. զի թէ յաղ-
թեմ՝ըք պըսակիմք.. եթէ մարմնով
յաղթա″: Փ. ՚ի յարդարոցըն դասեսցին.

յկ Ե. Կոչի բաժին: Փ. որ է պայծառ ւե_
րևելի.. անցաւորին.. ՚ի փափկութեանց:
Կ. որ փոխանակ: Փ. քաղաքին, որ է շի_
նած.. որոյ շինող ճարտարա″: Կ. այն որ
կանգնեաց կամար զերկին.. զդասն վե″:
Փ. և զոր ՚ի սմա:

յհ Փ. ՚Դնմա հաստատեսցուք, զյոյս ըզ-
հաւատ՝ըս զերկոսին. մի թէ կամի՞և... այ_

սու աւել՝ մեք գոհաս" : կ. մի՛ր որ լինի :
փ. բնութիւնն : կ. մանկանց նոցին :

Փ. Վաղափուլ.. նոցին.. դըժոխն : ե. յձ
զօրս աւերեաց : փ. և այսպիսին, ա՛ մի-
միեան՝ըս զօ" : կ. Անդ ոչ.: Այլ միաբ".
Մինչ հանա" : փ. միախորհուրդ՝ըք լի-
նէին : կ. իւր ցեղին :

Ն և փ. Մ՛ի երկընչիք 'ի սրոյ նոցին : յդ
կ. քաջ և արի՝ զօրքն ասէին : փ. և ոչ՝
ժամանակին.. յամեալ յապաղէին : կ. որ
յընդհանուր :

Փ. Տալ օգնութի : կ. վըճարէին : փ. ն
վճարեցին.. թէ կանխեալ ժամանակին..
գչարիս մերկացուցին : կ և փ. իսկ հաստու-
ցին : կ. ճըմլին.. որովայնիս :

Փ. Յայն լոյս երեկ՝ըն.. յայնժամ ըդ- նծ
հուրըն.. բորբոքեցին.. որ 'ի վերուստ..
փորուածին.. պարիսպ՝ըն ամրոցին : կ.
իսկ դաւանային : փ. զինուք անկար՝ծըն
պա" : կ. դիմել 'ի մահ՝ խրախու" :

Կ. Գրուոհ տային : փ. եպիսկոպոս՝ըն նէ
պատուական, 'ի ձեռն.. եղբարք և սիրե-
լիք.. զմահն ընտրեցէք.. որ և զկեանս՝ է
զօ".. իսկ չարութիւն արբա" : կ և փ. ըդ-
դասըն վառէր : կ. նոցին, յայնըմ մար-
տին՝ պատերազմին.

Փ. Գունդքըն զօրացն : կ. մերձեալ 'ի նլ
մուտըն պա" : փ. ինչ անտառէն... նը-
հանջէին : կ. երանի՛ զանձն իմ էին : փ.
ճըմլել.. բանիւ լռեմ :

նխ  փ. Յաղթել քաջանց՝ որ.. վէրօքն անդրն".. զոչեաց ռամիկ.. 'ի սուր ւաւեր՝ ւ'ի գերութե : կ և փ. ասաց լինել : կ. և գայն լուեալ երբայեցին : փ. ձեռամբ յեռնեալ տագնա" : կ. փողս և քօղեր՝ըս զոչէին.. մինչ գի երկիր :

նծ  փ. Այնքան դատեալ վաս".. ժուժկալէին.. վս այնորիկ : կ և փ. տեսութե էր դըժուարին :

նկ  փ. Նւ սաաջի՝ ընթա".. իսկ մարդադէմն՝ըն գազանին : կ. ըղձայրասուր՝ըն քարշէին : փ. 'ի մէջ գառանց, 'ի հաւտ նոցունց.. արեան վտակքըն : կ. և ըղմանկունս, անխնայա".. յարեանց՝ ըն ձապախին : փ. ալիք՝ ներկանային :

նհ  կ. Նւ քհնյքըս խոր" : փ. քանզի արեան ծարաւէին.. զոչեաց անապատին, և գէշախած՝ արջն 'ի բային : կ. ցըրուէին.. պատառէին :

նձ  կ. Ըգդուրսն.. ոչ թուլացոյց՝ըզ.. և բազմութեան : փ. և բազմութիւն փախուստ աււին.. ըզշեղջ.. օրինակ մայրից փայ" : կ. դիզանային.. նուազէին.. ըզտղայք՝ըն գրկ", 'ի միասին :

նղ  փ. Օ՛ի անդորրել անցանէին : կ և փ. այլ գի չէր ոք՝ օգտակարին, ո՛չ ձե" : ե. քանզի խաւսել : փ. և ոչ 'ի քոյր՝ ըս գթա" : ե. աղեկոտոր ըն լինէին :

շ  փ. Իսկ փախուցեալքն ըշտապէին.. կարհուրէին.. անկելոց : կ. կէսքըն ոտիւք :

փ. և 'ի ծովըն.. բայց այլ ազգացըն..
առ ընտրութե... հասակին :

Կ և փ. Որք զընծէին կողոպտէին : կ. ճժ
սարկաւագ՝ ընթեռ".. 'ի դպրութե...
ապաժուժ : փ. քարին՝ըս հո" :

Կ և փ. Յորմէ և բան՝ մարգարէին : ճի
փ. յերկիր հեղին.. ըզքհնյք և ժղվդքն..
չորից ծագաց քըխս" : կ. դաղմատեան և
Թոր" : փ. ըզդաղմատեան և զԹորգոմեան :

Փ. Մակաբային.. քահանայ : ե. հայոց ճլ
ազգացեղին : կ և փ. այն որ պահեաց :

Փ. Իբր օրինակ հօտից նորին : կ. ոչ ճխ
լինիցի : փ. գրեալ բանին, իւրաքանչ_
իւր.. և կամ տեղեակ քերեալ տա". այլ
և նոցունց գերարհեստին.. վախճանես_
ցին.. քանզի իբրև ըզշունք հասին...
և սրոյ վաղճանէին :

Կ և փ. Սակաւք 'ի դղեակն՝ ամր" : ե. ճծ
լըսէք բանի : փ. կերակուր ամբա".. և
ոչ ըզջուրն.. քրիստոնէից.. գայ և հըպ" :

Կ. Զուխտն ստէր : փ. զոր ետ նոցին : ճկ
կ. որ բընութե : փ. որոց ունէր.. կանգել
ոտին.. ապագային : կ. ըստ ժանդագործ
անաւրինին : փ. զարիւնս նոցին :

Կ. Կողոպտեցին : փ. և հաւուց, զոր ճհ
պա".. հանդերձ անձին.. զոսկեղէնին : կ.
զունակ բուրումն.. և զհնչեցող զանկա_
կանին : ըզվարագոյր՝ըս խորա" : զարդ
հանդերձին :

Փ. Զուսովըն պատ".. որ է նըման.. ճձ

որ 'ի կարգին : ե · ողբումն է յեսային :
փ · պար առնէին, և հայրապետքն՝ այն :
ե . և հայրապետ՝ըն 'ի միջի : կ · մեղու աւ_
րինակ անդ ձեմ" :

շղ Ն · Ոպ ըղհաւտն : կ · մի տէրութիւն :
փ · կամ դառնագոյն պըտ" · · և գիս ա_
րեան . . ծնեալ որդիքս , աստ 'ի գիրկըս՝
խողխողե" :

Ո Կ · Նւ ըղորբոյ ածած" : փ · որ 'ի
կարգին : կ և փ · իսկ առաջնորդ : փ · քեզ՝
մեծ աւետիս · · տուն և տեղի · · մոլորած՝
ժողովըդոցս · · անշունչ քարի :

ոժ Փ · Յորոց արեամբ : կ · մաքայ : ե · մէք_
քա : փ · յորում է յոյս · · գի այժմ առաք
փոփո" · · յարևե" · · 'ի հետ խաչին : կ ·
ըղպաշտաւնե" · · խրախճանէին : փ · այլ
և չարեաց՝ արբանեկին : ե · որոց շագիք :
փ · զագիք · · կատաղեալ, յորսոյ վերայ
արձա" · · սպանեցելոյն, յանձինս իւրեանց :

ոի Կ · Օրովայնան հեղձնուլին · · խայծա_
տէին · · · ըստ ըսպանելոց" : փ · և չարու_
թիւն ըռ" · · և հրաշալին · · հոմանուն · ·
արիւնահեղ՝ նենգով 'ի լին :

ոլ Կ և փ · Նրգել նըմին : կ · գինարբունս :
փ · գինարբոյս : կ · քերովբէքըն : փ · խո_
րան սըրբոց · · իւրս՝ըն մտնէին :

ոխ Փ · Ուսուցեալ է մահ" · · ըղտոց տուն · ·
և զայլ · · զոմանս ինք" : կ · որ էր վատ_
թար : փ · զորս համառօտ · · · սուլթա_
նին · · և կոյր կուրաց :

Կ. Խաւարելոց աւ՛՛ : Փ. աղտեղութի, ոծ
գանասելի . . ուսուցանող . . . աւրինագրէ
զլուանալին . . որով և զորտք որ'ի ծովին . .
մեղօք լթաղել : Ե. աբդ այսպիսի լուր : Փ.
այլ զպաշտաւն բար՛՛ :

Փ. Քոյոյ նախնին . . փաղամպարին . . ոկ
'ի մրգկրթին : Կ. զի ես ահա վաղվա՛՛ . .
յերկրէ բաւնամ զագգըս նոցին : Փ. և
զազգ նոցին . . այլ աբդ զրէր . . ինք փը-
քանայր ող՛՛ : Կ. զայս որ կային : Փ. ոչ
գիտելով յիմար հոգին . . թէ զայս ոչ ուժն
իւրոյ բազկին . . պիղծ գնտին :

Փ. Գործոյ չարին . . նոյնպէս լինէր ոչ
ինէլին : Կ և Փ. դարձեալ բանիւ ոն այ :
Կ. զաւազանաւ՝րն բար՛՛ : Փ. եղեալ՝ 'ի
հրամանին :

Փ. Իբրև յառաջ ժամանակաւ, եբր՛՛ : ոձ
Կ. առնէ յանդին : Ե. ձեան նըմանին . .
տալոյ նոցին : Փ. հորդուն գլխոյ . . . իսկ
նոքա զիս՝ դառնա՛՛ :

Կ և Փ. ոսկերք անկ՛՛ : Փ. առ խորան_ող
սըն . . զորս երեսուն . . որդիք էին : Կ.
ւ'ի զալ չարեաց՝ բողո՛՛ :

Փ. Պատասխանեալ խիստ ասէին : Կ. Չ
'ի սրբութինսդ : Փ. ածեմ զաւեր . . զորս
'ի հարկէ . . առին տարան 'ի գերութիւն . .
և ըզտաձարըն հըրաշալին . Կ. զկազմած
զարդին : Փ. և ժողովուր՛՛ :

Փ. Եւ ըզախոյն անդ . . բազումք են չժ
զոր պատմին . . և թէ չխնայէ . . յոյժ ա_

ռաւել քան ըղնուսին · այլ որպէս հայրըն զիւր որ″ : կ և փ · կամ տերունեան · · արբցէ ասէ՝ զան : փ · քան զայլն՝ որ ոչ · · քանզի լցաք գործովք · · և ոչ արարաք՝ զկամս արարչին :

չի Փ · Յիւրաքանչիւր՝ յիւր հա″ · · մեղաց՝ անկանէին · · վարուք էին, չէ պարտ ասել՝ զոր գործէին : կ · 'ի սր՝ըն սրով-բէից : փ · գործովք չարին, որով 'ի նոյն · · բերան՝ անզեղջ բացին :

չլ Փ · Այս վըճռուիս՝ դատստնի · · բիւր քա-ղաքին, պատիժ նոցա՝ միայն · · կամ թէ նոքա՝ արդարք էին, որոց 'ի ձեռ″ : կ · պատասխանի · · 'ի սերովմայ :

չխ Փ · Այս խըրատ է · · յորում և գործք՝ ոչ երևին · · այս կրթիցին :

չծ Կ · Որպէս՝ զերկրաւորին : փ · հրահանգ դատաստանին, զի սուրն ածէ : կ · բարբա-րոսին :

չկ Փ · Անձրևաց՝ զալ անչափին · · · մի-նինային · · մրկան զազրա″ · · · զամուր · · կամ յաղթանդամ · · յայն լոյս խա″ :

չհ Կ · Թունաւք պղծէ : փ · 'ի նայե՝ըն քաղցրակամ : կ և փ · զմուկն և զխլուրդ՝ըն միա″ : կ · և ինձ եղեր մահու · · զիմ տըր-ղայս : փ · խողխողեցեր՝ զերդ ըզգա″ :

չձ Փ · Եւ սընուցեր զիս 'ի մըթան · · վե-րայ սողան : կ · մըռմըռան · · զըաժակըն դառնաման · · վերջական : փ · 'ի ծոց՝ ընդ եօթնաջան : կ · օրինակ յազգըս մարդկան :

Փ. Ցերկրէն հանցէ: Կ. քո գաղաթան.. չէ
պատեն ոչ գաղան.. քո աւգնական:
Կ և փ. Քեզ պաշարեալ.. քեզ որո- Պ
գայթ՝ ան″: փ. գաղտ թագուցեր, աւցէ
զոտիւք ընդ խոր″: Ե և փ. քանզի անդէ
քեզ բա″: փ. սիրով արևըդ պա″..
լինին ջընջեալ:
Կ և փ. Լեցին մորովք և տատանեալ: պծ
փ. հատուցէք ինձ չարչարեալ: Կ. ձեզ
բազմացեալ, արդ մի գոցի: փ. կամ որդ-
ւոց ձեր՝ ոք ող″.. գործ անխծից: Կ.
ելցէ՝ կարճ ՚ի յաւեր: փ. ելցէ գետեր:
Կ. Սողոմացւոց՝ հուր ծըծըմբաբեր: պե
փ. խիստ և արագ՝ սրտիւ: Կ. յարեան վը-
տակքն: փ. և քոյին տոհմի թուըքեր..
սատակեսջիք.. զամաղեկայ չար″:
Կ. Յեսուայ յերկրէն.. տարագրեալ պն
աւտարաբեր.. յոյժ ՚ի հասակըդ.. որդի
ղաւթեայ ծն″... երեք քարեան առանձ-
նաբեր.. զղէնդ՝ զոր ուսուցեր:
Կ և փ. Հատցէ զգլուխըդ քո սուսեր: պխ
փ. խօսեցեր.. որ ՚ի դժոխս իջցես.. յան-
կողին.. ըղքեզ յազդեր: Կ. ըղմակաբ-
եանք չար″.. չարեացն ամեն:
Ն. Եւ առաւել գերա″: փ. ընդ ա- պծ
րեան՝ խառնակեցեր: Կ. արդ ՚ի յիս ոչ՝
խընայեցեր: փ. ո՛չ նայեսցի ողորմա″: Կ.
մերձ ՚ի յաւեր.. որ զանձեցեր: փ. յօր կո-
րըստեան... տըն ՚ի վերայ:
Կ. Մինչև տացէ բազմապա″.. փոքր պկ

ինչ աւեր: փ. զոր հուպ եղ″.. ահաբեր..
երբ առընթեր: կ. քո մահմէտոսին:

պհ Փ. Խառնիք դուք: կ. և տարտարոսըն:
փ. գոյն կրպեա.. անպարապ էր:

պձ Կ. Դուլթի սուրբ երգ: փ. չէք ինչ
մեռեալք.. պրսակեալք:

պղ Կ. Ձեռըս լինիք: փ. 'ի յանմարմնոց
դա″: կ. դասքըն կար″: փ. և հողեղէն..
որոց չին″: կ. այն որ կապեաց՝ կամար զեր-
կինք.. վաստակեցէք.. սերմանեցէք..
'ի զարունն՝ հոգւով ծաղկիք: փ. պարա-
բեսջիք: կ. բուսանիցիք:

Ջ. Փ. Սաղարթաբեր պաճու″: կ և փ.
ծառն կենաց մեր″: փ. 'ի մահուանէ այլ
ոչ.. արձակէք: կ. զուարճալից: փ. աշ-
խատեցեալք՝ երբև.. կենաց արբիք..
սրտիւ բերկրիք:

ջա Փ. Նոցին կաթիկ. նոքա բերան բելի″..
զոգն՝ աբրահամու.. զպարտըն մե″...
ըզկաթըն մածագին:

ջբ Փ. Թագ 'ի գըլուխ՝ պսա″.. զայն նե-
ղուի: ե. անդ յիշեցէք: փ. ինքնակամ
ձերով հաճիք: կ. արք ընդ արեանց՝ սըր-
բոց.. կանայք 'ի դաս: փ. թագիւ պըճ-
նեալ.. զարդարեալ.. դասըս ցնծայք:

ջգ Կ. Ընդ անմարմնոց՝ ըն դաս ցըն″.. նո-
րին լինիք.. դասս հաւա″: կ և փ. լիցին՝
յոյժ մխի″: փ. և թէ 'ի սոյն այն մա″..
առ իս է յու″: կ. այլուստ էք բա″:

ջդ Կ և փ. սուգըդ լու″: փ. զըսգեստըն

տխրա″ : կ. ատուձք վըձար·· ատձք յանձին :
փ. ախտ մահարար : կ. որ բժշկէ զմեզ սի-
րաբար :

Փ. Ո՛չ բարկանայ՛ մեզ նա իսպառ : կ. ճծ
ածէ զըժար : փ. և զընթացիւք արբ″ :

Փ. Ո՛չ թէ իմոյն՝ միոյն զղխպակ . զոր ճկ
ինձ հատոյց խիստ ձախո″ : գերիչ իմ. .
զընտան : կ. իբրև զծովու . . ծըփանաց՝
աւզին գունակ·· ընուն զաւրէն՝ երկ″ : փ.
զձիւն արասքատակ :

Կ. Ա,գզ հաւասար : փ. առնեն աւար՝ ճհ
և ասպա″ : կ. զբարէլ առնեն խիստ աւե:
փ. զմաքայն քակեն : կ. զդևսն որ հալա-
ծէր , անդ առա″ . տըրն համարձակ : փ.
զքարին զըլեն : կ. ըզհետ մտեն՝ նոցա :
փ. զոչէ յարազ, փախչին երէք առհասա-
րակ . . 'ի սուսեր 'ի տէզ՝ և 'ի նիզակ :

Փ. Նւ զայլն առնեն : կ. մինչ յայն՝ ճձ
կոյս անընակ·· զծառայս և զաղ″: փ. եր-
կիր ծաւաց : կ. ամեն ազգաց . . էին հա-
րեաց : փ. ուր հալածած՝ են և : կ. լինի
աշխարհ՝ քըխս″ . յանչափ յանբառ՝ բա-
րեաց լըցած :

Կ. Վայ ասեն՝ վայ մեռելոց : փ. 'ի զա- ճղ
ւառըս հե″. և 'ի յաշխարհ . . և ամբառ-
նամ . . ես ցընծացած . . . մերկացած . .
գոյն զգեցած :

Ե. Ոստայնանկաց : կ. փորանկեալ : Մ
փ. և զառազաստնին նկարած : կ և փ.
պարզիմ : կ. խորհրդազգած : փ. մակաղեք

հաւտ քո խաշանց , և զաւք անմեղք մը
զաւտաւաց :

ուժ Փ . Առաքելոց մար″ . . սրբոց բանից
վար″ . . ձայնիւ երգէք ընդ . . այլ ասացէք
յուսով կե″ . զի փառք նախնոյն մը տա″ :
Ե . քան զվերջինն լինի յառաջ : Փ . լինի
առատ : Կ . և տայ անցեալ անդր : Փ . 'ի
մը տառաց . . սպասեմ՝ այսըր :

ուի Փ . Եւ առ ապար՝ կատա″ . . նշանս 'ի
գրոց . . թէ չէ գալոց . . զայս տուեալ :
Կ . ոչ հողեղէն տեսեալ աչաց : Փ . տե_
սեալ էաց : Կ . ոչ թէ 'ի միտ . . . էք ընդ
նմին ժաւան″ :

ուլ Փ . Անդր ցնծայք : Կ . էք մտանելոց :
Փ . զլոկ համանուն : Կ . ներսէս բաց″ : Ե .
և գշաւաւիղ : Փ . բանիս գրոց : Կ . 'ի
սփոփանս ողորմելոց : Փ . առ 'ի սփոփանք
տրտմեցելոց :

ուխ Փ . Մեղ և բոլոր : Ե . քանի բանիւ :
Կ . վասն սոցունց . . այլ ախմարաց : Փ .
մանուկ տղայոց տխազոլով : Կ և Փ . յաջող՝
գլնուց ձիոց : Փ . զոր արարաք՝ խրա_
խանելոց :

ուծ Փ . Օր վայելեաց՝ բարի սոցունց :

# ԱՌԵՂԾՈՒԱԾՔ ԻՆՉ·

’Ի վերագրելոցն սըյն Ներսէսի շնորհալւոյ:

## ԵՐԿԻՆՔ:

Եկեղեցին՝ բարձր էր և լայն,
անհուն շինուած՝ էր ւանդերան,
Կանթեղքն ’ի կախ՝ կան անչուան,
ջահերն անձէթ՝ ըզլոյսըն տան:

## ԱՐԵԳԱԿՆ:

Նա բարձրանայ՝ յայըէն ’ի քէն,
և խոնարհի՝ դարձեալ անդըէն,
Ամեն գըըի՝ հինգ աւր յիւրմէն,
գընայ ըզվեց՝ ամիսն ամեն:

## ԱՐԵՒ:

Տեսի զմանուկ՝ որ ծընանէր,
ւ ’ի նոյն աւուր՝ըն մեռանէր,
Յետ թաղելոյն՝ դարձեալ յառնէր,
ւայլ գեղեցիկ՝ զինք ցուցանէր:

## ԼՈՒՍԻՆ:

Կայր նըկանակ՝ մի գեղապանծ,
յաշխարհաշէն՝ փըւան եփած,

’Ի յեփողէն՝ իւրմէ խառուած ,
և ’ի նմանէ՝ դարձեալ լցած :

## ԱՍՏԵՂՔ :

Ծառ ’ի վերոյ՝ ջուրըն մեկնած ,
ներքոյ ամուր՝ աւզով փակած ,
Աւազն ամէն՝ հրով լցած ,
մի քան ըզմի՝ պայծառացած :

## ԱՇԽԱՐՀ :

Դանդոկ մի կայր՝ վերայերկրէ ,
’ի յանցաւոր՝ ճանապարհէ ,
Յոր անծանաւթք՝ ’ի նա գայէն ,
և իւր ծանաւթ՝քըն գընայէն ·
Մինչ հիւրըն գայր՝ մեծարէին ,
և մինչ գընայր՝ կողոպտէին ·
Ո՛չ թէ մասն ինչ՝ իրս առնուին ,
այլ զբովանդակ՝ըն խըլէին :

## ԳԵՏ :

Աւձ մի ըստուար՝ դունով կապոյտ ,
գալարելով՝ առնու պըտոյտ ,
Յիւր փորըն կայ՝ այն բարւոյն գիւտ ,
որ ’ի ցամաք՝ մեռնի նա շոյտ :

## ԾՈՎ :

Կաղմարն անթուրծ՝ է ’ի կաւոյ ,
թանաքն ’ի ներքս՝ առանց գունոյ ,
Գըրիչն անշունչ՝ է կենդանւոյ ,
առնու գըրէ՝ վերայ հողոյ :

## ԱՆՁՐԵՒ :

Նա 'ի ծովէն՝ վերակայի,
ամփոփելով՝ իբր 'ի տըկի ·
Քաղցրիկ մաղէ՝ ուր տեղ պիտի,
երբ աստուծոյ՝ կամքըն հաճի :

## ՁԻՒՆ :

'Ի յելանելըն՝ է փըրփըրակ,
երբեմն լինի՝ փոշետեսակ ·
Նա դիզանայ՝ որպէս բամբակ,
երկրի սերմանց՝ է աւժանդակ :

## ՑՈՐԵԱՆ :

Մեռանիմ՝ ւանմահանամ,
դարձեալ յառնեմ՝ կենդանանամ,
Զաչս 'ի յերկին՝ըս ամբառնամ,
բազմաստեղաւք՝ըն զաւրանամ :

## ԽԱՂՈՂ :

Զարմանք ասեմ՝ քեզ սիրելը,
կին մի ծընաւ՝ գըռուզ որդի ·
Տըղայն ունէր՝ ալեք ծերի,
երբ ծերանայ՝ դառնայ սեւի :

## ՄԵՂՈՒ :

Երէց քարկոփ՝ և իմաստուն,
յիւլթոյ ծաղկանց՝ շինէ իւր տուն ·
Քաղցըր բղխէ՝ նորա լեզուն,
բընաւ չանկնի՝ իւր աչքն 'ի քուն :

## .ԳՈՐԻ :

Ած չարար՝ եղեւ նա նոր ,
շա՛տ հիացայ՝ ես վասն այնոր ·
Թէպէտ նըման՝ է 'ի փայտ չոր ,
ընդնա սիրէ՝ խիստ ձիաւոր :

## ԱՅԾ :

Միշտ նա շըրջի՝ 'ի ժեռ քարեր ,
ունի վաճառ՝ մազէ քըրձեր ,
Գինւոյ ունի՝ աղուոր տըկեր ,
ւաւժտէ ձըրի՝ դանկի կոթեր :

## ՁՈՒԿՆ :

Գըրեալ 'ի գիրն՝ աւետարեր ,
անունն իւր չար՝ որ մի՛ յիշեր ·
Է՛ տիրասէր՝ առնէ որսեր ,
հովուին չըկայ՝ գերդ նա ընկեր :

## ԿԱՏՈՒ :

Որպէս բամբիշ՝ յուշիկ գընայ ,
յետուստ պարան՝ ըն 'ի քարշ գայ ·
Բազմի փափկիկ՝ բարձի վերայ ,
որսիկ առնէ՝ քան ըզըագայ :

## ԲԱԴ :

Ցուշիկ երթա՝ իբր ըզտիկին ,
յիւրն աճաւած՝ հանդերձ անձին .
Ոսկի փողնոց՝ կայ 'ի վըզին ,
բացէ 'ի բաց՝ է իւր ագին :

## ԿՐԵԱՅ:

Չորքոտանի՝ է զերդ ըզջուն,
և ձու ածէ՝ զերդ ըզթըռչուն,
Նա խոտ ուտէ՝ զերդ անասուն,
ունի մըզկիթ՝ և ոսկրէ տուն :

## ԳՐԻՉ:

Հաւ մի տեսի՝ ես անկենդան,
հատիկ ուտէր՝ ձեռամբ մարդկան .
Եթէ պաշխարհս՝ ամենըն տան,
ուտէ ասէ՝ չեմ բաւական :

## ԳԻՐ:

Մաւրն իւր արգանդըն՝ էր սեւայլին,
հաւրըն բարակ՝ ամենևին ·
Որդիքըն սեւաւ՝ ծընանէին,
'ի դաշտ սպիտակ՝ բընակէին :

## ԳԻՐՔ:

Տուն մի տեսի՝ սպիտակ փըռուած,
և սեւ հաւեր՝ 'ի ներքս թառած,
Զուս ածէին՝ ցեղք 'ի ցեղաց,
լեզուաւ խաւսին՝ բանականաց :

## ԶՐԱԴԱՑ:

Ոմն 'ի յէից՝ ըս անկենդան,
ձայնիւ դոչէր՝ ահեղական,
Ընթրիս կոչէր՝ զազգըս մարդկան,
և զիւր փըրխածն՝ առնէր սեղան :

## ԴՈՒՌՆ :

Զորեքժըրուի՝ ինքըն կանգուն ,
ուր զնա չունի՝ գիտեմ չէ տուն .
Ըզմարդն անհող՝ առնէ ’ի քուն ,
ուր զայս գիտէ՝ ինքն իմաստուն :

## ԳԵՐԵԶՄԱՆ :

Մայրն ամենից՝ զարգանդն եբաց
զորդիսն առինքն՝ կոչեաց անհաց ,
Զորդունքըն կեր՝ արար մըսաց ,
չողորմեցաւ՝ իւր զաւակաց :

ՎԵՐ.Ջ :

---

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ .

| երես. | տող. | |
|---|---|---|
| 1. | 8. | Եւ ինքնասուն՝ ընդ երեքկի : |
| 2. | 19. | Եւ ինձ գըրեաց̀ երանութիւն : |
| 15. | 7. | Հընձեաց զորայն՝ յանդաստանի : |
| 37. | 3. | Դիմել ’ի մարտ̀ խրախուսէին : |
| 44. | 20. | Ո՛չ վերարկու̀ արկանէին : |
| 47. | 10. | Զիւրաքանչիւր̀ գովեստ անձին : |
| 48. | 4. | Սակաւք ’ի դղեկն՝ ամրանային : |

6n

ՀՀ Ազգային գրադարան
NL0107793